

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ  
ՀԽԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍԻՏՈՒՏ

ԳԻՏԱԿԱՆ ՆԱՏԱՐՁԱՆ, ՆՎԻՐՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ  
ՍՈՎԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԵՐ ՀԱՍՏԱՏՎԵԼՈՒ 60-ԱՄՅԱԿԻՆ

1978 - 1979 թթ.

ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ԵՎ ԲԱՆԱՀՅՈՒՍԿԱՆ  
ԴԱՇՏԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ  
/ 1980թ. մայիսի 5-7 /

ԶԵԿՈՒՑՈՒՄՆԵՐԻ  
ԹԵԶԻՍՆԵՐ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՅՈՒՆ  
ԵՐԵՎԱՆ 1980



A-11

63436

ՀԱՅԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ  
ՀԱՅԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍԻՏՈՒՏ

ԳԻՏԱԿԱՆ ՆԱՏԱՐՁԱՆ, ԽՎԻՐՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ  
ՍՈՎԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԱՐ ՀԱՍՏԱՏՎԵԼՈՒ 60-ԱՄՅԱԿԻՆ

1978 - 1979 թթ.

ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ԵՎ ԲԱՆԱՀՅՈՒՍԱԿԱՆ  
ԴԱշտական ՀԱՏԱԳՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

/ 1980թ. մայիսի 5-7 /

ԶԵԿՈՒՑՈՒՄՆԵՐԻ

ԹԵԶԻՍՆԵՐ

21-80

ՀԱՅԱԿԱՆ ՍՍՀ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ԵՐԱՎԱՆ

1980

Խմբիր՝ Դ.Ս.Վարդումյան  
Редактор: Դ.С.Вардумян

НАУЧНАЯ  
СЕССИЯ, ПОСВЯЩЕННАЯ 60-ЛЕТИЮ  
УСТАНОВЛЕНИЯ СОВЕТСКОЙ ВЛАСТИ В АРМЕНИИ

ИТОГИ ПОЛЕВЫХ ЭТНОГРАФИЧЕСКИХ И ФОЛЬКЛORИСТИЧЕСКИХ  
ИССЛЕДОВАНИЙ ИНСТИТУТА АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ  
АН АРМ. ССР ЗА 1978-1979 ГГ.  
(5-7 мая 1980 г.)

ТЕЗИСЫ ДОКЛАДОВ  
(на армянском языке)

© Издательство АН Армянской ССР, 1980

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР  
ЕРЕВАН - 1980

Դերեն Վարդումյան  
Արտաշես Նազինյան

ՀԱՅ ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԲԱՆԱՀՅՈՒԽՈՒԹՅՈՒՆԸ  
60 ՏԱՐՈՒՄ

1. Հայ ազգագրությունն ու քանահյուսությունը հնագույն պատմություն ունեն: Ժամանակագրորեն այն կարելի է քաժանել երկու հիմնական փուլի՝

ա/ Նյութերի տարերային կուտակման քազմաղարյան ժամանակաշրջան /անտիկ ժամանակներ և ամքողջ միջնադար/,

բ/ որպես գիտության ուրույն ընազավառ ծևակորվելու և զարգանալու ժամանակաշրջան / անցյալ դարից մինչև մեր օրերը, խորհրդային շրջանում նորովի առաջընթացով/,

գ/ Լինելով մի ամքողջության՝ ժողովրդագիտության հիմնական քաղաքարիշներ, երկրորդ փուլում, հատկապես խորհրդային շրջանում, կառարկում է ընազավառների մասնագիտական տարանջատում, ազգագրանությունը՝ պատմական, քանագիտությունը՝ քանասիրական ուղղվածությամբ:

2. Խորհրդային շրջանում հայ ազգագրության զարգացումը նույնպես կարելի է քաժանել երկու ժամանակաշրջանի՝

ա/ 1920-1940-ական թվականներ, երբ առկավին գործում էին դեռևս նախանդագործական շրջանից հայտնի քազմավաստակ ազգագրագետներ / Ն. Լալայան, Խ. Սամվելյան, Ստ. Լիսիցյան և այլք/, որոնք հավաքական գործունեությանը զուգընթաց, հրատարակեցին մի շարք ընդհանրացնող աշխատություններ,

բ/ 1950-ական թվականներից մինչև մեր օրերը, երբ ասպարեզ եկավ ազգագրագետների նոր սերունդ, որը հենվելով ավանդութայինի վրա, գիտության արդի պահանջներին համապատասխան, ծավալեց հավաքչական և հետազոտական լայն գործունեություն Հնագիտության և ազգագրության ինստիտուտում, Հայաստանի պատմության պետ. թանգարանում, Երևանի պետ. համալսարանի հնագիտության և ազգագրության ամբիոնում ու արդեն նաև՝ նորաստեղծ Հայաստանի ազգագրության պետ. թանգարանում:

3. Տասնամյակների դաշտային աշխատանքների և արտահաստիքային քանահավաքների միջոցով հետազոտության ոլորտի մեջ ընդգրկեցին Հայաստանի գրեթե ըոլոր պատմա-ազգագրական շրջանները, ինչպես նաև

Հայաքնակ այլ վայրերի զգալի մասը:

4. Այս ամենի հիման վրա հրատարակվեցին մի շարք մենագրություններ, նվիրված հայ ժողովրդի անցյալի զբաղմունքներին, նյութական ու հոգևոր մշակույթին և հասարակական-ընտանեկան կյանքին ու կենցաղին, ինչպես նաև դրանց վերափոխությանը խորհրդային շրջանում: Այդ ամենը ժամանակին յուրովի ամփոփվեց, , Աշխարհի ժողովուրդները,, մատենաշարի , , Կովկասի ժողովուրդները,, հատորի , , Հայեր,, բաժնում /1962թ./: Հայ ժողովրդի մշակույթի նորովի՝ քարտեզագրական մեթոդներով ընդհանրացում կլինի պատմա-ազգագրական առլասը, որի առաջին պրակները պատրաստվում են հրատարակության: Հիմք է դրվել և հաջողությամբ շարունակվում է , , Հայ ազգագրություն և ըանահյուսություն,, համահավաք մատենաշարի հրատարակումը /11 պրակ, 1970-1980թ./:

5. Վերջին տարիներս ինստիտուտում ստեղծված էթնոսոցիոլոգիական հետազոտությունների խումբը լայն աշխատանք է ծավալել նորագույն մեթոդներով հանրապետության ընակչության ուսումնասիրության ուղղությամբ: Արդեն հետազոտվել է մայրաքաղաք Երևանի ընակչությունը և աշխատանքներ են տարվում Հայկական ՍՍՀ. մյուս քաղաքների ու գյուղական վայրերի ընակչության հետազոտությանն անցնելու համար:

6. Վերջապես, շատ ուշացումով, սակայն մեզ մոտ ևս պատրաստվել են տարբեր պրոֆիլի մարդաքաններ, որոնք դեմքի պլաստիկ վերականգնմանը և հնէամարդաքանությանը զուգընթաց զբաղվում են էթնիկ մարդաքանության որոշ հարցերի հետազոտությամբ: Առաջին արդյունքները հուսադրող են՝ հստակվում են տրմենոիդ տիպի հատկանիշները, փորձ է արվում պարզելու Հայկական քարծրավանդակի հնագույն և այժմյան ընակիշների ֆիզիոլոգիական տիպի հաջորդության հարցը և այլ հարցեր:

7. Սովետական ըանագիտությունը նույնպես զարգացել է անցյալի հայ դասական ըանագիտության ավանդույթների հիման վրա: 1920-ական թվականներից սկսած նոր շրջանի ըանագիտության ձևավորման ասպարեզում խոշոր ավանդ ունեն ըազմավաստակ գիտնականներ Ն. Լալայանը, Մ. Արեգյանը, Կ. Մելիք-Օհանջանյանը և ուրիշներ:

8. Սովետահայ ըանագիտությունը 60 տարվա ընթացքում խոշոր հաջողություններ է ծնուց քերել ըանահավաքչության ասպարեզում: 1930-ական թվականներից սկսած մինչև օրս գիտական արշավախմբերի, անհատական դաշտային գործուղումների և սիրող ըանահավաքների ջանքերով Հայաստանի շրջաններում և Հայաստանից դուրս հայաքնակ վայրերում գրի են առնվել ըանահյուսական ըազմաժանր և հարուստ նյութեր, որոնք

պահպանվում են ինստիտուտի ըանահյուսական արխիվում:

9. Քանահալաքական աշխատանքներին գուզընթաց մեծ գործ է կատարված ըանահյուսական մի շարք ժանրերի գիտական համահավաք հրատարակության /,,Սասնա ծոեր,, , , , Հայ ժողովրդական հեքիաթներ,, , , , Հայկական առածանի,, , , , Ավանդապատում,, , , , Հայ ժողովրդական հանելուկներ,, և այլն/, արդի ըանահյուսության նմուշների/,,Լենին փաշա,, և այլն/, ինչպես նաև ժողովրդական երգարվեստի ու պարարվեստի / Ս.Ս.Լիսիցյանի ,, Հայ ժողովրդի հնավուրդ պարերն ու թատերական ներկայացումները,, եռահատոր ուսումնասիրությունը և այլն/ նյութերի գրառման և հետազոտության ասպարեզում:

10. Վերջին տասնամյակում հայ ըանագիտությունը ճեռնարկել է ըանահյուսական արխիվի մշակումը և համակարգումը՝ նորագույն գիտական մեթոդներով, օգտագործելով էլեկտրոնային հաշվիչ տեխնիկան, պատրաստվում է ըանահյուսական գլխավոր կառալոգը, ժողովրդական խաղիկների համահավաքը և առակների քանակական-համեմատական հետազոտությունը:

## Դերեն Վարդումյան

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐՁՐԱՎԱՆԴԱԿԻ ԲԽԱԿՈՒԹՅԱՆ  
ՆՅՈՒԹԱԿԱՆ ՄՇԱԿՈՒԹՅԹԻ ՀԱՄԱԿԱՐԳՄ-ԿՄՈՒԹՎԱԾՔՅԱՆ  
ԵՎ ՊԱՏՄԱ-ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԹՅՈՒՆԸ

1. Ամեն մի էթնոսի նյութական մշակույթը փոխառնչակցված ըաղաղիչների համալիր է, պայմանական արխիվական կյանքի ըուլոր կողմերով: Այդ պարագան նպատակամղում է նյութական մշակույթը դիտելու ինչպես կառուցվածքորեն առնչակցված ըաղաղիչների ամրողական համակարգ, նույնպես և էթնիկ մշակույթի համանման այլ համակարգերի / որպիսիք են տնտեսությունը, հասարակական կյանքը և հոգևոր մշակույթը/ հետ փոխզործողության մնջ գտնվող համակարգ: Նյութական մշակույթին նման մոտեցումը պատմա-համեմատական վերլուծության առավել արդյունավետ միջոց է:

2. Այդ վերլուծությունը ենթադրում է, մի կողմից՝ էթնոսի գործառնության ընա-էկոլոգիկ պայմանների հաշվառում, մյուս կողմից՝ դրա ընակության էթնո-մշակութային միջավայրի հանուր ամրողության հաշվառում, ներառած թե միջէթնիկ առնչությունների ընույթը,

թե ներէթնիկ կազերի ինտենսիվությունը։ Պատմա-համեմատական վերլուծությունը նպաստում է ոչ միայն առանձին քաղաքիչների /ինչպես, օրինակ՝ քնակարանը, հագուստը, ուտելիքը և այլն/, այլև տարբեր պատմական դարաշրջանների նյութական մշակույթի ամբողջության ընդհանրացված տիպերի կազմում։ Հենց նման ընդհանրացված տիպերն էլ այս կամ այն էթնոսի նյութական մշակույթի ըմբռնման և այլէթնիկ համալիրների հետ լայնորեն համադրելու առավել արդյունավետ գործիք են։

3. Հայկական քարծրավանդակի քնակչության նյութական մշակույթի հետազոտումը վերը նշված տեսանկյուններով, նաև և առաջ, հնարավոր է դարձնում ուսումնասիրվող ոեզիոնի քնակչության նյութական մշակույթի ընդհանրացված տիպերի կազմումն ըստ զանազան պատմական ժամանակաշրջանների։ Այնուհետև, դրանց քաղղատությունը նյութական մշակույթի այլ համալիրների հետ հնարավորություն է ընծեռում քացահայտելու ինչպես հաճախ մշակութային ավանդույթի ուժ ստացած էթնիկորեն յուրահատուկ գծերը, այնպես էլ առաջավորասիրական և կովկասյան համալիրների հետ համադրվող ընդհանրությունները, որոնք հայկական քարծրավանդակի քնակչության նյութական մշակույթը վերջինների հետ մի կարգի մեջ են առնում։

#### Զավեն Խառատյան

### ԴԻՊԱՇՍԹԻՆ /ՕԿԱԶԻՈՆԱԼ/ ԵՒՍԱԿԱՆ ՀՄՄԱԼԻՐԸ ՀԱՅԵՐԻ ԿԵՆՑԱՂՈԽ

1. Հայ ժողովրդական հավատալիքների և դրանց հետ առնչվող / շատ հաճախ էլ՝ դրանցից քիող / քազմաքովանդակ ծեսերի համակողմանի գիտական ուսումնասիրությունը ենթադրում է տիպարանական և կառուցվածքային վերլուծություն։ Նման հարցադրման դեպքում որոշակիորեն առանձնանում են հավատալիքների, սովորույթների ու ծեսերի հաստատուն, պարբերաբար կրկնվող համալիրներ և փոփոխական, որոշակի պարբերացման շենթարկվող ծիսախմբեր։

2. Հաստատուն ծիսական համալիրներ են կազմում ինչպես ժողովրդական-տոնացուցային, այնպես էլ ընտանեկան / ծննդյան, հարսանյաց և թաղման/ ծեսերը։ Առաջինն ամեն տարի /պարբերաբար/ կրկնվող հասարակական ծիսաշար է, երկրորդը՝ կանխատեսվող պարտադիր ծիսաշար յուրաքանչյուր ընտանիքի կամ առանձին անհատի կյանքում։ Տոնա-

ցուցային և ընտանեկան ծեսերը միմյանցից որոշակիորեն տարբերվում են նաև կառուցվածքային ու ֆունկցիոնալ նպատակամղվածության առումով:

3. Այս իմաստով որպես տոանձին, ինքնուրույն խումբ կարող է դիմովել ծեսերի ու պատկերացումների այն շարքը, որը կոչված է մարդկանց զերծ պահելու անակնալներից և կամ խափանելու հնարավոր անհաջողությունը։ Հիրավի, եթե անդրադառնալու լինենք հայերի սովորույթների, կրոնական պատկերացումների և սնահավառ արարողությունների ողջ համակարգին՝ ժողովրդի կյանքում դրանց ունեցած դերի և տեղի կենսական անհրաժեշտության տեսանկյունից, ապա, թերևս, առաջին պլան մղվեն այն ծեսերը, որոնք այս կամ այն կերպ առնչվում են մարդկանց առողջական վիճակի, օքանակեցության և հաջողության հետ։ Այս տիպի ծեսերի ընդհանուր, միավորից զիծն այն է, որ դրանք կյանքի են կոչվում զերազանցապես անսպասելիորեն, վաղօրոք շնախառվող իրադարձությունների քերումով։ Նման կարգի ծեսերի համալիրը ընորոշելու համար առաջարկվում է կիրառել „Պիպվածային”/օկազիոնալ/ հասկացությունը, որը կարող է ներառել ինչպես տարբեր հիվանդությունների և դժբախությունների վերաբերող ժողովրդական պատկերացումները, այնպես էլ դրանց հետ առնչվող ժողովրդական քժշկությունը։

4. Գրավոր աղօյուրների և դաշտային ազգագրական նյութերի համեմատական քննությունը հնարավորություն է ընծեռում հայ ժողովրդական պատկերացումների մեջ առանձնացնելու հիվանդության հնարավոր պատմառների երեք հիմնական մոտիվ։

ա/ Հիվանդություններ, որոնք ծեռք են քերվում անմաքուր ուժերի / շար ոգիներ, ,, շար աշք,, , զանազան վնասաքեր ծեսեր / ներգործության հետևանքով ,

բ/ Հիվանդություններ, տրված տարբեր սրբերի կամ աստծո կողմից, որպես պատիժ ծանր մեղքերի դիմաց,

գ/ Հիվանդություններ, որ առաջ են գալիս հիմնականում մեխանիկական պատմառներով։

5. „Ա,, և „Յ,, կարգի հիվանդությունները համարվում են վերուստ արված և քուժելի են միայն զերքնական ուժերի միջամտությամբ, մինչդեռ „զ,, կարգինը երկրային են, ապաքինելի քացառապես ժողովրդական քժշկության միջոցների կիրառմամբ։ Հիվանդությունների քուժմանը ծառայող ծիսական պրակտիկայում որոշակիորեն սահմանագատվում են”

ա/ միջոցներ, որոնք մատչելի են ամենքին,  
բ/ միջոցներ, որոնք համարվել են միայն որոշ մարդկանց  
մենաշնորհը:

Տարքեր հիվանդությունների, պատուհասների ու անհաջողությունների դեմ պայքարելու և դրանցից ազատվելու միջոցների ընազավառում գրոֆեսիոնալիզմը արտահայտվում է հատուկ „մասնագետ-միջնորդների,, հանդես գալով: Դրան մեծապես նպաստում են / քացի այդ մարդկանց՝ մյուսներին անսովոր թվացող անձնական շնորհից/ նաև անհրական/ոգիներ, սրբեր/ և իրական /մարդիկ/ աշխարհների միջև երևակայական կազի ժողովրդական պատկերացումները:

### Սուրեն Հոքոսյան

## ԶԻԹԱՏՈՒ ԲՈՒՑՄԵՐԻ ԵՎ ԶԻԹԱՄԹԾՐՁՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՂԱՄԱԿԱՆԵՐԸ ՀԱՅՈՑ ՄԵԶ

1. Զիթատու քույսերի մշակությունը սկսած հնագույն ժամանակներից մինչև մեր դարի քսանական թվականները հայերի երկրագործական տնտեսության կարևորագույն մյուղերից է եղել: Հայաստանում մշակվել են տասից ավելի ծիթատու քույսեր, որոնցից առաջինը տարածված են եղել կաակատը, սորեկը, թնջութը, կանեփը և հլածուկը: Դրանցից ստացվող ծեթը կիրառվել է տնտեսության ամենատարօներ ընազավառներում:

2. Զիթատու քույսերի մշակման հիմնական նպատակը հատիկի ստացումն է եղել, որից էլ ծեթ են զտել: Հատիկից նաև որոշ տեսակի, առավելապես ծիսական կերակուրներ են պատրաստել:

ա/ Սննդի համակարգում, հատկապես ծիսական կերակուրների և թխվածքների մեջ, լայնորեն կիրառվել է կտավատի, թնջութի և սորեկի ծեթ:

բ/ Կտավատից, սորեկից, մանանեխից և այլ քույսերից ստացված ծեթը օգտագործվել է նաև տեխնիկական նպատակներով՝ ընակարանը լուսավորելու, ներկերի արտադրության, կաշվի մշակման, գոմեշներին,, ծիթելու,, և այլնի համար, Արարատյան դաշտի որոշ գյուղերում տզկանեփի ծեթից նաև օճառ են պատրաստել:

գ/ Զեթի դերը մեծ է եղել հատկապես ժողովրդական քժշկության ասպարեզում: Ամենաջարդ տիպի հիվանդություններ քուժելու համար օգտագործվել է կտավատի, ծիթապաղի և տզկանեփի ծեթ:

η/ Բավականին մեծ քանակությամբ ծեթ է օգտագործվել նաև վանական անտեսություններում՝ առօրյա սննդից քացի, մեռոն պատրաստելիս և մոմի փոխարեն այրելու համար:

3. Տնտեսական կենցաղում օգտագործվել են նաև ծիթատու քույսերի երկրորդական նյութերն ու թափոնները:

ա/ Կտավատի, սորեկի, հլածուկի և կանեփի ցողունները ծառայել են որպես շենքերի ծածկի շինանյութ, որոշ շրջաններում՝ նաև վառելանյութ:

թ/ Համախ քերքահավաքից և կալսելուց հետո, հողը պարագացնելու նպատակով ցողունները դաշտում փացրել կամ այրել են:

զ/ Հայաստանի գրեթե քոլոր շրջաններում ընդունված է եղել նաև կանեփի ցողուններից թելի ստացումը, որից պարաներ, որոշ շրջաններում նաև ճկնորսական ցանցեր են հյուսել:

դ/ Սորեկի մանրացված ցողունը որպես անասնակեր տվել են մանր եղջերավոր անասուններին, իսկ հատիկների գտումից առաջացած մնացորդը /քուսպ/՝ լծկան անասուններին:

4. Դաշտային ազգագրական նյութերը և անցյալ դարի հետազոտողների ուսումնասիրությունները հանգեցնում են այն հետեւության, որ հայերի տնտեսական կենցաղում ծիթամթերքների նշանակությունը քավականին մեծ է եղել: Այս հարցերի հետազա ուսումնասիրությունը կնպաստի հայ ժողովրդի կենցաղում ծիթհանության և դրա հետ կապված մյուս հարցերի քացահայտմանը ազգագրորեն:

#### Հեռու Ազգային ազգային ազգագրության համար

### ՏԵՍԽԵԼՈՒ ՈՒ ԶՏԽՍԽԵԼՈՒ ՀԱԿՄԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՌԱՋՎԵԼՈՒՄ ԾՎ ՃԵՍՈՒՄ

1. Աշխարհի ստեղծումը պատկերող մի շարք դիցարանական սյուժեների համաձայն առաջին մարդիկ ապրում էին խիստ նեղվածքի ու մթության մեջ: Հետազայում այդ վիճակը, որն ամենից լավ արտահայտում է սանսկրիտական *stotras* բառը / հմմտ. հայերենի „նեղ,, , „նեղանալ,, , , „նեղսիրտ,, , իմաստաբանական քառաշարքի հետ/, փոխվում է արդի իրավիմակին, որը օժտված է „ լայն արածությամբ,, , / սրբ լոկա /: Հենց նոր վիճակում էլ ի հայտ է գալիս լույսը՝

մարդիկ հնարավորություն են ստանում տեսնելու:

2. Մինչև տեսնելը, սպայն, մարդիկ օժտված էին լսողությամբ: Այդ արխետիպ պատկերացումը, ըստ որի լսելն ավելի հնավուրց է համարվում, քան տեսնելը, արտացոլվում է մի շարք տեղստերում՝ սկսած Հովհաննեսի ավետարանի առաջին խոսքերից և վերջացրած Դուռընկարություն / Վ.Ն. Տոպորով/: Սպայն այսաեղ կանոնադասունաց նույն աստիճանի հնամենի պատկերացմանը, որը գործ ունի տեսնել-չտեսնել հակադրության հետ:

3. Տեսնել-չտեսնել հակադրությունը որոշակի իմաստով դառնում է համարժեց տեսունակ-անտեսունակ կույր/ հակադրությանը, սպայն կուրությունը ավյալ դեպքում ըմբռնվում է իրեւ ամեն ինչ ներքին տեսողությամբ տեսնելու ունակություն, այսինքն՝ այդ հակադրությունը փոխարինվում է տգետ-իմաստուն հակադրությամբ: Վերն ասվածի ցայտուն օրինակ կարող է ծառայել Դեմոկրիտը, որն ինքն իրեն կուրացրեց, որպեսզի արտաքին աշխարհը չիանգարի տեսնելու անտեսանելիի էությունը: Նույն շարքին է պատկանում նաև էղիպ արքայի կուրությունը՝ ըստ Վ.Տոպորովի և Ս.Ավերինցեի մեկնարանման:

4. Ներքին տեսողությունը հնդկական ավանդույթում կապվում է Շիվայի երրորդ աշքի հետ, որի տեղը համապատասխանում է պղնձ շակրացին: Ըստ յոգական պրակտիկայի, հենց այդ շակրայի հետ է կապված լույսը տեսնելու առեղծվածային հատկությունը և ընդհանրապես միստիկ տեսողական իրականացումը: Հետաքրքիր է նշել, որ արդի գիտությունը Շիվայի աշքի տեղում հայտնաբերել է կոնանման գեղծը, որն ունի որոշակի հալյուցինազեն նյութեր արտադրելու հատկություն:

5. Տեսնել-չտեսնել և տեսունակ-կույր հակադրությունների մի ուրիշ կողմ ի հայտ եկավ հյուսիսային ժողովուրդների շամանիզմը ուսումնասիրելիս: 1979թ. Զուկոտայում, էսկիմոսյան ջոկատի կազմում աշխատելիս, Մ.Հ Ենովի հետ գրի առանց կույր շաման Այվիխակի ծիսային արարողություններին վերաբերող մի յուրօրինակ փաստ:

Այվիխակը տաղանդավոր քանասաց է եղել. որից Խ.Ռուզլյովը գրի է առել մեծ քանակությամբ էսկիմոսյան հեթիաթներ: Այվիխակը վախճանվել է երիտասարդ հասակում, դարիս քառասնական թվականներին:

Էսկիմոսյան քոլոր հայտնի շամանական արարողությունները կացարանի ներսում կատարվում են մթության մեջ: Տեսանելի են

միայն որոշ ամենադրամատիկ պահերը՝ սարսափահար հանդիսաթեսները, օրինակ, տեսնում են շամանի արյունոտված դեմքը սեփական մատները կրծելուց հետո, սակայն արարողության գլխավոր մասը նրանք ընկալում են միայն լսողությամբ:

Սովորաբար շամանական արարողության այդ հատկությունը մեկ նաքանվում է որպես մի միջոց, որի օգնությամբ շամանները խռում են հանդիսաթեսներին: Շամանական արարողությունների մի ամենալավ իմքի, հիրավի, կարելի է նման մեկնաքանում տալ: Սակայն, ինչպես ցույց են տալիս արդի հետազոտությունները, շամանիզմի հետ կապված քոլոր պրոքլեմները չեն, որ այդքան դյուրին են լուծվում:

Այսիիակը միակ շամանն է եղել, որն արարողությունները կատարել է լույս տեղ: Այսիիակը կույր է եղել, և նրա համար գոյություն չի ունեցել լույսի ու մթության հակադրությունը: Նա միշտ էլ պպրել է խավարի աշխարհում: Այսինքն՝ մթության /չտեսնելու/ պայմանն անհրաժեշտ է հենց շամանին՝ հատուկ հոգեկան վիճակի հասնելու համար:

### Արա Գուլյան

## ՊՐՈՁՍԵՄԻԿ ՏԱՐՍԱՁԸ ՈՐՊԵՍ ԷԹՈՌ-ՆՇԱՆԱՑԻՒ ՀԱՄԱԿԱՐԳ

1. Էղուարդ Հոլը 1960-ական թ. հրատարակած իր աշխատություններով սոցիալական մարդարանության մեջ հիմք դրեց մի նոր ընազավառի, որն անվանեց պրոքսեմիկա:

Է.Հոլի առաջարկած սահմանումներն ընդհանուր հայտարարի քերելով, կարելի է ասել, որ պրոքսեմիկան կոչված է ուսումնասիրելու մարդու կողմից տարածության ընկալումը և օգտագործումը:

2. Է.Հոլի այժմ արդեն դասական համարվող աշխատությունները եկան ընդհանրացնելու մարդու կողմից տարածության ընկալմանը և գլխավորապես դիցարանական աշխարհայցքի հետ առնչվող՝ մշակութային տարածքի կառուցվածքին նվիրված սեմիոտիկ ուսումնասիրությունները: Ինչպես ցույց տվեց Է.Հոլը, տարածության ընկալման և օգտագործման էթնիկ տարրերությունները հատուկ են ոչ միայն „դիցարանական շրջանին,, , այլև նույնիսկ արևմտա-եվրոպական արդի-

մշակույթին, այսինքն՝ ընակավայրը, ընտակարանը կամ դրանց կառուցվածքային ըաղաղրիշները և նման այլ երեսութներ էթնոնշանային համակարգեր են:

3. Նմանատիպ էթնո-նշանային համակարգ է հանդիսանում նաև ժամանակակից սովետահայ մշակույթին հատուկ պրոցեսմիկ /մշակութային/ տարածքը և դրա ստեղծման ըացահայտ և ոչ ըացահայտ սկզբունքները, որոնց ավանդութային որոշ գծերի գոյատեսումը պայմանավորված է նաև, այլ գործոնների շարքում, պրոցեսմիկ տարածքի և պրոցեսմիկ պահածքի ետաղարձ կապով:

### Նվարդ Երնջակ յան

## ԵՐԿԱՆԱՅԻՆ ԼՈՒՍՏՈՒԽԵՐԻ ՇԱՐԺՄԱՆ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԻ ԲԱՐԵՆՊԱՍ-ԱՆՔԱՐԵՆՊԱՍ ԸՆԿԱՆՈՒՄԸ ՀԱՅԵՐԻ ՄԵՋ

1. Բնության մեջ կառարվող փոփոխությունները որոշակի տեղեկություններ են պարունակում: Առօնին կյանքում միշտ կողմնորոշվելու համար անհրաժեշտ էր ունենալ ժամանակի հերթագայության միշտ պատկերը: Այն տեղեկությունները, որ հնարավորություն են տալիս միշտ կողմնորոշվելու ժամանակային փոփոխությունների կրկնվող հերթագայության մեջ, ի սկզբանե ստացվում էին երկնային լուսատուների շարժումը, դիրքը ուսումնասիրելուց, որն ուղեցույց էր թե ժամանակի և թե տարածության մեջ:

2. Այս տեղեկությունները ենթարկվում էին նաև այնպիսի վերլուծության, որի հիմքում ընկած էր Բնությունից ստացվող ինֆորմացիայի օբյեկտիվ և սուբյեկտիվ ընկալումը: Այս հակադրության առումով հետաքրքիր է նշանի և ազդակի միջև եղած խոր տարրերությանը վերաբերող թախաինի միտքը: Բնությունից ստացվում են միայն ազդակներ, սակայն ընկալվում են իրեն նշաններ: Բնության ազդակների նկատմամբ տվյալ վերաբերմունքն ստեղծում էր հատուկ կոմյունիկատիվ իրադրություն, որի դեպքում նշանն ստեղծողը մարդն է:

3. Այսպիսի հարաբերության դեպքում զոլոր ազդակներն ընկալվում էին իրեն նշաններ և ընորոշվում քարենպաստ-անքարենպաստ ըանաձևմամբ: Այստեղից էլ՝ տեսանելի լուսաւուների շարժման հետ համընկնող ժամանակահատվածների /արևածագ, ցերեկ, գիշեր, նորալուսին և

այլն/ քարենպաստ-անքարենպաստ ընկալումը ժողովրդի մեջ: Հենց այս տոռւմով են իմաստավորվում ազգագրական նյութերից հայտնի քազմաթիվ ժողովրդական պատկերացումներ, կապված արևի, լուսնի, մասնավորապես համաստեղությունների և աստղերի հետ՝ իջրե ժամանակը ընորոշող քարի կամ չար ուղղեցույցներ:

Վահրամ Թաթիկյան

## ՄՐՑԱԿԻ ՀԱՏՈՒԿ ԽՈՐՃՐԴԻՄԱՍ ԱՐՏԱՀԱՅՏՈՂ ՈՒՂԵԳՈՐԳԵՐԸ

1. Արցախի ուղեգորգերը որպես ընակչության կենցաղի անքակտելի մաս, ունեցել են վաղնջագույն արմատներ, ենթարկվել գորգային հիմնական հորինվածքների զարգացմանն ուղեկցող ընաշրջման: Դրանց երկարուկ, նեղ չափսը սաեղծել է զարդանկարի կազմակերպման ուրույն տրամադրանություն, որի շնորհիվ գորգերի հորինվածքների որոշ համազարդեր ավելի են անհատականացվել ու ընդգծվել, շարադաս կրկնման շնորհիվ հաստատելով իրենց խորհրդիմաստները:

2. Ուղեգորգերի քազմաթիվ խմբերի սկզբունքորեն անհաշիկ տարբերակների ու փոփոխականների միջից առանձնանում են համազարդ կազմությամբ, ինչպես նաև ներքին զարդարանուններով միավորված մանրանախշերից քարդված հորինվածքները: Մեծադիր համազարդերում է, որ առկա են հնագույն հավատալիքների հետ կապված խորհրդիմաստները: Ուղեգորգերի այդ խմբում խորհրդիմաստը որոշակիորեն ունի նաև սրբացման կամ նվիրագործման երանգներ: Հատուկ խորհրդիմաստներով օժտված մեղալիոնների շարքին պետք է դասել, օրինակ, այն հորինվածքները, որտեղ համազարդը ըաղկացած է հակամետ զարդանախշերից / արծիվ-վիշապ, կրակ-ամպ և այլն/, ինչպես նաև առապելական կենդանակերպ տարրերից:

3. Մի կողմից՝ ուղեգորգերի զարդանախշերի խորհրդիմաստները, մյուս կողմից՝ դրանց ըուն կիրառումը կենցաղում/հատուկ առիթներով՝ հարսանիք, հոգեհաց, աշքալուսանց և այլն/ հուշում են, որ առանձին վարդյակներ և մեղալիոններ պետք է որ ունեցած լինեն տոհմանշանի դեր: Եթե այդպես է, առավել պարզ է դառնում դրա ոիթմիկ կրկնությունը՝ ամեն մասնակցի ,, հասնում է,, մեկ մեղալիոն, իսկ շատ հնում դրա վրա նստելու իրավունքը, ընականաբար, կարող էին ունենալ միայն այդ տոհմանշանով կապված ազգակիցները,

քարեկամները, դաշնակիցները, համայնքի անդամները: Խորհրդիմաստների՝ մոգական ուժը կարող էր ուղեգորդին հաղորդել քազմակողմանի ընույթ, և վրան նստած անգամ չար մտադրություններ ունեցող հյուրը կարող էր վնասազերծվել անկավածի շարիափան հատկությունների շնորհիվ: Օժիտի հետ արվող հարսանեկան ուղեգորդերի մեծ խմբում առկա են նաև պտղաքերքի գաղափարը խորհրդանշող զարդանախշեր:

4. Տակավին XIX դ. վերջերին- XX դ. սկզբներին գործածված գորգերում զիտակցված էր զարդանկարի սեմանտիկ, սրբացված ընույթը, որը, ազգագրական փաստերից քացի, վկայվում է նաև հետևյալ հանգամանքով՝ Արցախում և Սյունիքում հատկապես սիրված մի քանի քարդ մեղալիոն, ըստ որում Արծվագորգինը և կեռիսաշով գորգերինը, երջեք չեն հանդիպում ուղեգորդերում: Առավել սրբացված, համզգային ընույթի հերալդիկ մեղալիոնները, ըստ երևույթին, ավանդաբար փոխանցված արգելքի թելադրանքով, չեն ընդգրկված ուղեգորդերի հորինվածքում: Դա է հաստատում Արծվագորգի ուղեգորդային տարրերակը, որտեղ մեղալիոնը խիստ փոփոխված է, ընդ որում անհետացել են հորինվածքի հիմքում ընկած հակիմաստ, կենդանակերպ զարդանախշերը, մնացել են միայն քուսական տարրերը և ծածանչները: Հետեապես, կարելի է ենթադրել, որ նվիրագործումը կապված է եղել հենց դուրս մնացած զարդանախշերի հետ:

5. Վերջապես, կարևոր են ոմական և իմաստային այն քազմաթիվ օղակները, որոնցով ուղեգորդերն անմիջականորեն կապվում են միջնադարյան վիշապագորգերի և այլ գորգերի հետ: Վերջիններիս քնորոշ շատ զարդագոտիներ պահպանվել են հիմնականում ուղեգորդերի հորինվածքում:

Այս ըոլոր հանգամանքներն ուղեգորդերը դարձնում են գորգարվեստի և առնասարակ ժողովրդական արվեստի ուսումնասիրության համար արտակարգ շահեկան, ուրույն մի նյուղ, և կարևոր դարձնում դրանց ըոլոր տարրերակների վավերագրումն ու հավաքումը:

### Էղմոնդ Սիմոնյան

ՏՂՄՄԱՐԴԿԱՆՑ ԵՎ ԿԱՍՆԱՑ ՏԱՐԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ

ԸՍՏ ԹԱՊԻՒԳ-ՏԵՍՏԻ

/ Խակասական սաղայ ցեղախմբի օրինակով/

1. Նյարդային համակարգի և խառնվածքի ժառանգորեն պայմանավորված ընդհանուր հատկանիշների վերաբերյալ մեր կողմից պոպուլացիոն տվյալների հավաքման կապակցությամբ անցկացրինք խակասների

համադրազար միատարր՝,, մաքուր,, խմբերից մեկի՝ սաղայների<sup>1</sup>,, հոգեկան /անհատական/ տեմպի,, ուսումնասիրություն, կիրառելով թափինգ-տեսաթի մեթոդը /J.Frischeisen-Köhler, 1930/, S.Պանտելեևա, Ա.Փ.Ռախտա, Ն.Շ. Ելյախտայի քարեփոխությամը /T.A.Պանտելեևա, Ա.Փ.Ռախտա, 1978/:

2. Ըստ այդ մեթոդի, համապատասխան հրահանգ ստանալուց հետո ամեն մի անձ խիստ միատեսակ պայմաններում մաքսիմալ /T<sub>max</sub>/ և օպտիմալ /T<sub>opt</sub>/ տեմպով մատիտով կետեր է դնում թղթի վրա գծված շրջանակներում /երկուական՝ ամեն մի տեմպի համար/, յուրաքանչյուր շրջանակի հատկացվում է տաս վայրկյան: Այնուհետև հաշվվում է շրջանակների ամեն մի գույզի կետերի միջին քանակը: Սաղայցի 91 տղամարդուց և 108 կնոջից այդ կերպ ստացված ընտրութային տվյալները վիճակագրորեն մշակվեցին: Ընտրորդներն ուսումնասիրվեցին նաև ըստ երեք տարիքային խմբի /20-24, 25-39 և 40-60 տարիքային սանդղակներ կամ I, II և III խմբեր/, ինչը հնարավորություն տվեց հաշվի առնելու նաև տարիքային գործոնի ազդեցությունը:

3. Թափինգ-տեսաթի նշված ցուցանիշներն ընթրելիս նկատի է առնված, նախ, այն, որ երկվորյակային մեթոդով քացահայտված է դրանց զգալի կախվածությունը գենոտիպային գործոններից /И.В.Равинч-Щерб-ճо, 1974, 1978, T.B.Վասիլեց, 1974, վերը նշված հեղինակներ և այլն/, ապա՝ հարմարությունը դաշտային պայմաններում և կայունությունը, ոոր հաստատվում է միաժամանակ յա զանգվածային դիտումներով ոչ-ազգակից անձերից ստացված մեր տվյալներով /տես աղյուսակ 1/:

Կետերի քանակի տարրերությունը շրջանակների ամեն մի գույզում	Տղամարդիկ		Կանայք	
	T <sub>max</sub>	T <sub>opt</sub>	T <sub>max</sub>	T <sub>opt</sub>
Արդյունքներով մոտ գույզեր, ընդամենը՝	79կամ 86,80/0	86կամ 94,50/0	92կամ 85,20/0	90կամ 83,30/0
5 և ավելի կետով տարրերվող գույզեր, ընդամենը՝	12կամ 13,20/0	5կամ 5,50/0	16կամ 14,80/0	18կամ 16,70/0

1-Մաղայները՝ հիմնականում ընակվում են Կրասնոյարսկի երկրամասի Խակասական հիմ-ի Սոցիզի լեռնոտ և անտառոտ շրջանի ավաններում և ուլուսներում: Հոգերանա-ֆիզիոլոգիական նյութը Խակասիայում հավաքվել է 1978-ի ամռանը, Մոսկվայի համալսարանի Մարդաբանության ինստիտուտի խակասական գիտարշավի /ղեկավար՝ պատմ. գիտ. թեկնածու Ի.Վ.Պերեվոզչիկով/ կազմում աշխատելիս:

Ըստ այդ տվյալների, կանաց  $T_{\max}$ -ի և  $T_{opt}$ -ի, ինչպես և տղամարդկանց  $T_{\max}$ -ի կայունության շափսերը մոտավորապես հավասար են, սակայն վերջիններիս օպտիմալ տեմպը առավել կայուն է դրսեորվում:

4. Սաղայցիների խմբային տվյալները թափինզ-տեստի երկու ցուցանիշով հետևյալն են.

Տուցանիշ Տարիքավեց Հարկացին	Տարբերակ				Կանոնական				
	n	M±m	σ	∨	n	M±m	σ	∨	
$T_{\max}$	I	24	60,37±0,50	2,47	4,09	23	57,76±0,45	2,15	3,72
	II	34	62,29±0,36	2,13	3,42	34	58,47±0,35	2,02	3,59
	III	33	59,20±0,44	2,54	4,29	51	55,26±0,47	3,37	6,10
Միաց- յալ					/ 34*/54,64±0,58		3,40	6,22	
						108	56,66±0,32	3,32	5,86
						/ 91*/56,94±0,35	3,37	5,91	
$T_{opt}$	I	24	32,58±0,49	2,42	7,43	23	34,37±0,23	1,09	3,17
	II	34	33,41±0,46	2,70	8,08	34	36,47±0,28	1,62	4,44
	III	32	33,03±0,42	2,39	7,23	51	30,95±0,33	2,35	7,59
Միաց- յալ					/ 34*/32,15±0,49		2,89	9,00	
						108	33,40±0,36	3,80	11,38
						/ 91*/34,44±0,34	3,30	9,58	

Հաշվումները ցույց են տալիս  $T_{\max}$ -ի սեռային դիմորֆիզմը: Տղամարդկանց և կանաց խմբերի միջինների տարբերությունը Սայուղենակ շափանիշով հավաստիության երրորդ մակարդակից էլ վեր է  $A=7,71, P>0,999 /t_{st} = 3,4/$ : Այն իիստ հավաստի է նաև երկու սեռի ըոլոր միանման տարիքային խմբերի միջև, զացահայտելով, այսպիսով, տղամարդկանց մաքսիմալ տեմպի ավելի մեծ շափսը:  $T_{opt}$ -ի միջինների տարբերությունը սեռերի միջև հավաստի է միայն համահավասար ընտրութեների դեպքում, ի հայտ ըերելով կանաց օպտիմալ տեմպի ավելի զարգը մակարդակը ինչպես միացյալ  $/t=3,21, P>0,995/$ , այնպես էլ I ու II

տարիքային խմբերում: - III տարիքային խմբերի տարբերությունը հավաստի չէ /  $t = 1,35, P < 0,95/$ :

5. Եթե դիտվում է կանաց երկու ցուցանիշի դանդաղեցում տարիքավոր / III / հասակում, ապա արական սեռի համար / այդ օրինաշափությունը տարածվում է միայն Տոռտ-ի վրա: Երկու աղյուսակն էլ վկայում են հասուն տղամարդկանց Տոռտ-ի սեռատարիքային զարգր կայունությունը: Հետաքրքիր է, որ և Տոռտ-ի և Տոռտ-ի համար I տարիքային խմբերի տարբերությունը III խմբերից, երկու սեռի դեպքում էլ նվազ է, քան II խմբերինը: Դա, թերևս, հակառակ դրական տվյալների, խոսում է այն մասին, որ նյարդային համակարգի թափինգ-տեստով ընութագրվող հատկանիշների կազմավորումը 20-24 տարեկան հասակում տակավին չի ավարտվել:

6. Բերված տվյալները հաստատում են նաև չնչին դրական կորելացիոն կապը երկու տեմպի ցուցանիշների միջև, ըստ որում տղամարդ սաղայներինը հավասար է  $+ 0,191$ , իսկ կանացը ավելի պակաս է՝  $-0,134$ : Այսպիսով, Տոռտ-ը և Տոռտ-ը կարելի է դիտել որպես համեմատարար անկախ ցուցանիշներ, որոնք, հաշվի առնելով վերը բերված արդյունքները, թերևս հետաքրքիր կլինիկ էթնո-տարածքային խմբերի ընութագրման և համեմատման համար, մանականդ նյարդային համակարգի և խառնվածքի ժառանգականորեն պայմանավորված ընդհանուր հատկանիշների մի շարք այլ ցուցանիշների համադրությամբ՝ համալրային ուսումնասիրության դեպքում:

#### Աննա Փալիկյան

ՄԱՐԴԱՐԱՆԻՍԿԱՆ ՈՐՈՇ ՈՒՍՈՒՄՆԱԿՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԻՆ ԵՎ ԱՐԴԻ ԲԱՆԿՈՒԹՅԱՆ ՀԵՏՈՐԴՈՒԹՅԱՆ  
ՊՐՈԲԼԵՄԻ ՎԵՐՍՐԵՐՅԱԼ

91-80

1. Արդի ժողովուրդների էթնոգենեզի հետազոտությամբ գրադագում են մի շարք հարակից գիտություններ: Այս կամ այն ժողովրդի ծագումը կոմպլեքսային քարդ պրոցես է: Դա թե լեզվի կազմավորումը, թե մշակութային ընութագրի ու ֆիզիկական յուրահատկությունների և այլևայլ հատկանիշների մեավորումն է:

2. Մարդարանության դերը էթնոգենետիկ ուսումնասիրության մեջ որոշվում է երկու պարագայով. ա/ այս կամ այն էթնոսի ֆիզիկական հատկանիշները կապված չեն ոչ լեզվի / որով խոսում է տվյալ

ժողովուրդը / և ոչ էլ մշակույթի / որի կրողն է նա / հետ, թ/Լիար-  
ժեք պատմական ընույթի ինֆորմացիան ստացվում է տվյալ ժողովրդի հին  
և արդի ընակչության Ֆիզիկական տիպերի համեմատությամբ միայն:

3. Վերջին ասսնամյակում հին և արդի ընակչության ուսումնասի-  
րության մեջ որոշակի տեղ է գրավում գանգի տարբերակների /վարիա-  
ցիա/ որոշումը դիսկրետ փոփոխվող հատկանիշների, այսինքն՝ գանգի  
կարերի միացման կետերում մանր հավելյալ ոսկրների և անցքերի առկա-  
յության կամ ըացակայության միջոցով, ինչպես նաև գանգի միկրո-  
ռելյեֆի որոշ առանձնահատկություններով: Այդ հատկանիշների գենետիկ  
ընույթը և ժառանգական փոխանցումն անտարակուսելի է: Մորֆոլոգիկ  
միասնությունը կամ տարբերությունները որոշելու նպատակով տարբեր  
էթնիկ խմբեր ու ժողովուրդներ համեմատելիս նույն այդ հատկանիշ-  
ները կարող են նշանակալի էֆեկտներ տալ:

4. Ուսումնասիրության հիմք են ծառայել Հայաստանի ընառարած-  
քից գտնված չորս տարբեր դարաշրջանի/ըրոնգի շրջանից մինչև մեր  
ժամանակները / պատկանող գանգարանական սերիաները, ընդամենը՝ 313  
գանգ:

5. Ստահիկ անալիզի արդյունքներից երևում է, որ գրեթե ըու-  
լոր դիսկրետ տարբերակվող հատկանիշները, որոնք յուրահատուկ են մի  
սերիայի, այս կամ այն շափով ընորոշ են նաև մյուս սերիաներին: Դա  
ապացուցում է, որ հայերին ընորոշ է հատկանիշների ինքնուրույն հա-  
մալիր.

ա/ գանգի տարբեր անցքերի ըարձր համախականություն,  
թ/ հավելյալ ոսկրների թույլ համախականություն,  
գ/ ստորին ծնոտի այտոսկրի անշատող կարերի լրիվ ըացակայու-  
թյուն,

դ/ մետոպիզմի /մակատակարի/ համեմատաքար ըարձր տոկոս:

Կարևոր է եղել նաև մյուսների համեմատությամբ արդի խմբում  
հատկանիշների միջին համախականության ըարձրացումը:

6. Սերիաները միմյանց հետ համադրվել են ըստ Ստյուդենտի  
շափանիշի:

Առանձին սերիաների համեմատությամբ արդյունքներն արժանա-  
հավատ տարբերություններ չըացահայտեցին: Սույն հանգամանքը ցույց  
է տալիս, որ նշված խմբերը միմյանց հետ համադրվում են մորֆոլո-  
գիկ սերտ նմանությամբ, որը տվյալ դեպքում կրում է գենետիկ հետևորդ-  
դության ընույթը: Այսպիսով, Հայաստանի ընառարածքի հնէամարդաբանա-  
կան գտածոները վկայում են հին և արդի ընակչության մերժավորու-

թյունը, որով վերստին ապացուցվում է հայերի համածնությունը և մարդաբանական նմանությունը: Հայերի էթնոգենեզում գլխավորը, ուրեմն, տեղական ծագումն է, տեղական մարդաբանական սուրստրատի կազմավորումն ու գարգացումը:

### Ռաֆիկ Վարդանյան

## ԾԱՆՍՊԱՐՀԱՅՍՓԵՐԻՆ ԱՆԴՐԿՈՎԿԱԾՈՒՄ ԽIX ԴԱՐՈՒՄ

1. Անդրկովկասի տարբեր շրջաններում օգտագործվել են մանապարհաշափերի լոկալ համակարգեր, որոնք կապված են եղել ավանդական պատկերացումների հետ, ունեցել են հին ակունքներ և էական փոփոխություն չեն կրել ԽIX դ.:

2. ճանապարհի շափման հիմնական միավորը, ըստ սովորույթի, ընդունվել է մեկ ժամվա մանապարհը, որն ունեցել է զանազան անվանումներ, այն է՝ աղած, սահաթ, Ֆարսանգ և այլն:

3. Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ մեկ ժամվա մանապարհի շափանիշը և դրա համակարգի մեջ մտնող միավորները եղել են հարաբերական մեծություններ, նախատեսված մարդու, մաքսային գրաստի /ծի, ջորի, ուղու ևն/, քարավանի և այլնի համար:

ա/ Մարդու մեկ ժամվա մանապարհը տատանվել է միջին հաշվով մոտ 5կմ սահմաններում:

թ/ Մաքսային ծիու մեկ ժամվա մանապարհը ևս եղել է հարաբերական մեծություն, թեև այն կարելի է դասակարգել հիմնականում երկու խմբի, կապված ոչ միայն Անդրկովկասում ավանդութարար օգտագործված ծիու երկու տեսակի ու դրանց որակի, այլև տեղանքի և եղանակի հետ: Ըստ այդմ, մաքսային կարմահասակ ծիու մեկ ժամվա մանապարհը տատանվել է 5,5-6,4 կմ սահմաններում, երկարահասակ ծիունը եղել է միջին հաշվով 7,5 կմ:

4. Մեկ օրվա մանապարհի մեծությունը տատանվել է վերոհիշյալ գործոններին, տարվա ցիկլային փոփոխությանը, գյուղերի միջև եղած հեռավորությանը համապատասխան և եղել է միջին հաշվով ութ ժամվա մանապարհը:

ԽIX դ. Անդրկովկասում օգտագործված մանապարհաշափերի ուսումնասիրությունը հարավորություն է ընծեռում ոչ միայն կապ տեսնելի ավելի վաղ շրջանում կիրառված մանապարհաշափերի հետ, այլև քացատրել դրանց հետ առնչված մի շարք երևույթներ, որոնք այլևայլ

ԲԱԱԿԵԼԻ ՏԸՆ ՀԱՄԱԼԻՐԻ ՀԵՏ ԿԱԴՎԱ  
ԺՈՂՈՎՐԴԱՄՆ ՊԱՏԿԵՐՍՑՈՒՄՆԵՐԸ

1. Համագաղատական մասնագետների կողմից քավական հանգամանորեն ըննված են հայ ժողովրդական տան համալիրի կառուցվածքային և նարարապետական ընութազրման հարցերը: Սակայ են հետազոտված այդ համալիրի հետ առնչվող հավատալիքներն ու սովորույթները: Դրանց ուսումնասիրությունն ունի գիտա-մանաշողական և արդիական-գործնական նշանակություն:

2. Տվյալ հաղորդման մեջ ըննվելու են տան հիմնադրման-կառուցման / տեղի ընտրության, սահմանագաղատման, մաքրագործման և այլն/ հետ առնչվող, վերապրուկային կարգով տակավին հարատևող որոշ սովորույթներ:

3. Առանձին հետաքրքրություն է ներկայացնում այն ֆունկցիոնալ կազմը, որը դիտվում է տան համալիրի առանձին մասերի պաշտամունքի միջև՝ տեղի ընտրությունից մինչև տան ընտակեցումը:

4. Սոցիալական, կենցաղային, քարոյախոսական որոշակի արժեք ունի տան համալիրի կառուցմանն ուղեկցող քանակոր մագիստր պաշտպանական և պահպանողական նպատակամղմամբ:

5. Ժողովրդական տան համալիրի կառուցման հետ առնչվող հավատալիքներն ու սովորույթները գոյություն ունեն ըուլոր ժողովուրդների մեջ: Զուգահեռների անցկացումը կարող է հարուստ նյութ տալ ժողովուրդների էթնո-մշակութային փոխազդեցությունների լուսարանման համար:

6. Տան համալիրի հետ կապված մի քանի սովորույթներ կարող են արդիական հնչողություն ստանալ:

ա/ Նշանակալից կառույցների հիմքում կամ որևէ այլ հարմար մասում նշել մարտարապետի և կառույցողների անունները:

բ/ Փոխօգնությունը տան կառուցման ժամանակ:

գ/ Սերնդական կապն ամրապնդելու միջոցները/ հին և նոր տան միջև եղած կապը, ծերունիների դերը/:

ՀԱՅՍՍՏԱՆԻ ՌՈՒՍ ՄՈԼՈԿՈՆՆԵՐԻ ՀԱՐՍՍՆԵԿԱՆ  
ՄՐԱՐՈՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ /XIX դ.- XX դ. սկիզբ /

1. Սույն հաղորդման հիմք են ծառայել 1973 և 1979 թթ. հեղի-  
նակի հավաքած նյութերը Հայկական ՍՍՀ Կալինինոյի, Գուգարքի և  
Կրասնոսելսկի շրջաններում, որոնց տարածքում Սարատովի, Տամբովի,  
Վոլորոնեժի և այլ Նահանգներից գաղթած ոռւս աղանդավորների կողմից  
անցյալ դարի 40-ական թվականներին հիմնալորիվ են մոլոկանյան մի  
շարք գյուղեր:

2. Անհրաժեշտ է հենց սկզբից նշել, որ կրոնական համայնքի ղերը  
մեծ է եղել մոլոկանների ընտանեկան արարողությունների մեջ: Հա-  
մայնքում, քացի երեցից /պրեսվիտեր/ մեծ հեղինակություն են վա-  
յելել տարեցները՝,, հոգևոր հայրերը,, /"старцы" / և երգիչները,  
առանց որոնց հարավոր չէին ոչ աղոթքների, ոչ էլ ընտանեկան արա-  
րողությունների կատարումը, քանի որ երգեցողությունը մոլոկան-  
ների պաշտամունքի գլխավոր ռադաղրիչ մասերից մեկն էր:

3. Անցյալում երիտասարդների ամուսնություններ միայն հավա-  
տակիցների միջև է տեղի ունեցել: Որպես կանոն, գերակշռել են ներ-  
տոհմ ամուսնությունները: Մոլոկանների հարսանեկան ավանդութային  
արարողությունը սկսվել է խնամախոսությունից: Խնամախոսության են  
գնացել ծնողները կամ փեսացուի մերժավոր ազգականները: Հետա-  
քրքիր է խնամիների կողմից հարսնացուի գլխաշորի,, գնման,,  
մոլոկանյան ըսումնությունը: Ի նշան ամուսնանալու վերջնական որոշ-  
ման, հարսնացուն իր գլխաշորը,, վաճռել է,, խնամիներին, որի  
դիմաց նրանցից ստացել է դրամ:

4. Հայաստանի մոլոկանների նսխահարսանեկան շրջանը միատեսակ  
չի եղել: Առանձնացել է գյուղերի երկու խումբ՝ Բորչալուի գավառի  
Վորոնցովկա, Նովոմիխայլովկա և Ղազախի գավառի Միխայլովկա գյուղե-  
րը՝ մի կողմից, Ալեքսանդրապոլի գավառի Վոսկրեսենկա, Նիկիտինո  
գյուղերը՝ մյուս կողմից: Գյուղերի առաջին խմբում՝ խնամախոսու-  
թյունից մեկից-երեք օր անց հարսնացուի տանը տեղի էր ունենում  
,,կլաղկա,, - երեկույթ, ուր ներկա էին լինում երեցը և նշանված-  
ների հարազատները: Այստեղ պայմանավորվում էին փեսացուի կողմից  
հարսնացուին տրվելիք գնումների մասին, որոշում ամուսնության օրը:

Նկատե՞մ, որ,, կլաղկան,, ընորոշ է եղել Տամօվի և Վորոնեժի նահանգների ոռւս զյուղացիների հարսանիքին: ,,Կլաղկայից,, հետո հարսնացուի մոտ հյուրասիրության՝,, մաղարիչի,, են հավաքվել երիտասարդները:

Ալեքսանդրապոլի գալաքանի մոլոկանների հարսանեկան արարողություններում,, կլաղկային,, համապատասխաննել է այսպիս կոչված,, ջոխշան կապելու,, երեկույթը: Ամուսնությունից առաջ փեսացուն հարսնացուի տանը,, զայռուսկա,, հորջորջվող հյուրասիրության է հրավիրել, որտեղ հավաքվել են երեցը, երգիշները և նշանվածների ազգականները: Երիտասարդները սրան չեն մասնակցել: Հավանական է, որ,, մաղարիչն,, ու,, զայռուսկան,, ,,, փոքր հարթեցողություն,, / "զառօյ" / կոչվող արարողության արտացոլումն են, որ կատարվել են հարավոռուսական հարսանիքներում, և քանի որ մոլոկանները ալկոհոլային խմիչքների օգտագործման արգելք ունեն, պետք է ենթադրել, որ վերջիններս հարսանեկան տերմինարանության փոփոխության արդյունք են:

5. Փեսացուի ազգականների կողմից հարսնացուին տեսակցության գնալու սովորույթը հատուկ է Հայաստանի քոլոր մոլոկանների նախարասանեկան ցիկլին: Հարավային նահանգների ոռւս զյուղացիների մեջ լայնորեն տարածված որը հարսնացուի՝ զերեզմանատուն այցելելու սովորույթը գոյառնել է միայն Ալեքսանդրապոլի գալաքանի աղանդավորների մեջ: Հարսանիքի նախօրեին քաղնիքում լողացնելու և „ղեկիշնիկ,, երեկույթ անցկացնելու ծեսը մոլոկանյան հարսանեկան արարողությունների պարտադիր մասն է կազմել:

6. Հարսանիքի օրվա կուլմինացիոն պահը փեսացուի և հարսնացուի պսակադրությունն է եղել, որը կատարվել է երեցի կողմից, հարսնացուի տանը՝ կրոնական համայնքի անդամների ներկայությամբ: Դրանից հետո հարսանեկան թափորը ուղեկորվել է փեսայի տուն, ուր նաշկերութից հետո տեղի է ունեցել ազգականների և հյուրերի նվիրատվությունը նորապսակներին: Այսպիսով, մոլոկանների կրոնի ազդեցության տակ, որն արգելում է աշխարհիկ երաժշտությունն ու պարը, հարսանիքը վաստոռեն ստացել է կրոնական երանգ: Ի դեպ, „հարսանիք,, քառը մոլոկանները չեն օգտագործել: Կատարվող ողջ արարողությունը նրանք կոչել են ,, ամուսնություն,, , ղրանով շեշտելով կրոնական մոտիվի գերակշիռ դերը:

Այնուամենայնիվ, շնայած աղանդավորների ընտանեկան արարողություններում նշանակալի է կրոնի դերը, մոլոկանների հարս-

Նիթում զգացվում է համառուսական առաղջը, համախ կերպարանափոխված ձևով:

7. Չնայած ընդհանրությանը, Հայաստանի ոռւս աղանդավորների առանձին խմբերի հարսանեկան արարողություններին ընորոշ են եղել մի քանի յուրահատկություններ, որոնք, հավանաբար, հետևանք են էթնոմշակութային այն ավանդույթների, որոնք գաղթականների տարբեր խմբեր են նախկին ընակալայրերից:

### Մամոն Խալըթ/Դարվեշյան/

#### ՔՐԴԵՐԻ ԱՆԱՍՆԱՊԱՀԱԿԱՆ ՈՐՈՇ ՏԵՐՄԻՆՆԵՐԻ ՍՏՈՒԳԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՓՈՐՁ

1. Անասնապահության գարզացումը քրդերի տնտեսական կյանքում հանգեցրել է անասունների տարբեր ցեղատեսակների, նրանց արտաքին նշանների, սեռա-հասակային և այլ առանձնահատկությունների, ինչպես նաև խնամման հետ կապված հարուստ տերմինոլոգիայի առաջացմանը, ըստ որում մանր եղջերավոր անասուններին վերաբերող տերմինոլոգիան ավելի ըազմազան է ու հարուստ:

2. Անասունների սեռա-հասակային անվանումներն ունեն իմաստային նշանակություն, այսինքն՝ արտացոլում են որոշակի տարիքում տնտեսության մեջ ունեցած նրանց դերն ու նշանակությունը: Այսպես, քառդիբ /ճարդիր /՝ խոյին մոտ կանգնել, ընդառաջ գնալ / երկու տարեկան մանր եղջերավոր էզ անասունի վերաբերյալ / տերմինով քրդերեն հասկացվում է, որ տվյալ անասունի քեղմնավորման ժամանակն է: Բարդը /ճարդեր /՝ նույն տարիքի ործն է, իմաստն է՝ էզին մոտ կանգնել, այսինքն՝ խոյացու է: Ապա՝ միստավը /Միստար /, քառացի՝ ստերջ ոչխար, կամլըկ /կ'ամլեկ /՝ երեք տարեկան խոշոր եղջերավոր ործ անասուն, իմաստն է՝ լծվելու տարիքի:

3. Ուշագրավ են անասունների խնամքի հետ կապված տերմինները, որոնք ստուգաքանելիս օգնության է գալիս հարեւան ժողովուրդների՝ համանման երեսույթներին վերաբերող տերմինների համարումը: Այսպես, ա/ զաստին / գաստին /, նշանակում է խոշոր եղջերավոր անասունների հավաքածեղի: Բառը քաղկացած է թու աշտահ քաղաղրիչներից, սանսկրիտերեն՝ go, քրդերեն՝ զա, հայերեն՝ կով, ոռւսերեն՝ կօրօնա, անգլերեն՝ cow: Երկրորդ տարրը միջին պարսկերենում օգտագործվող աշտահ / վայր, տեղ / ցույց տվող հասկացությունն է:

Այսպիսով, զատինը համընկնում է քրդերեն տերմինի ըուն իմաստին:

զ/ գոհեռ / բօհեր' /, քրդերեն՝ մանր եղջերավոր անասունների հանգստավայր: Գոհեռ = ГО, սանսկրիտերեն = նույն կով հասկացությանը և հեր' փառ կամ քար, որ նշանակում է քարանձավ: Սույն քառը բաբար կամ բաբ'ար ձեւրով և նույն իմաստով գործածվում է նաև պարսկերենում: Կարծում ենք, որ այդ քրդական տերմինը պարսկերենի հօր'ի հնչյունափոխված ձևն է:

զ/ մոզըլահ / մօզելահ / խոշոր եղջերավոր անասունների ամուային հանգստավայր : Տերմինը քաղկացած է МОЗ, քրդերեն՝ մօզեկ, հայերեն՝ մոզի, պարսկերեն՝ լահ / քուն, տեղ/ քառերից: Ուրեմն՝ մօզելահ -ը համընկնում է վերոհիշյալ քացատրությանը:

Նույն տերմինը կարելի է քացատրել հետևյալ կերպ. МОЗ, քրդերեն՝ մանմ, հայերեն՝ մժեղ, պարսկերեն՝ լահ կամ բ'ահ/միջին պարսկերեն բ'ահ-ն գրվել են միևնույն տառով/, հետևաբար լահ -ը կարելի է ընթերցել բ'ահ/պարսկերեն՝ թշել, հեռացնել, փախցնել քայի հրամայական ձևը/: Այս քացատրությունը հուշում է, որ մանմերից սպատվելու նպատակով խոշոր եղջերավոր անասուններին, հատկապես մոզիներին տանում էին ստվերոտ տեղ:

դ/ քոզ / հ'օզ /, քրդերեն՝ նորածին գառներին պահելու տեղ / գառնանոց/: Այս տերմինը մի շարք հնդեվրոպական լեզուներում ընդհանուր առմամբ տուն, տնակ, վայր, հյուղակ իմաստով է գործածվում: Պարսկերեն՝ հ'օզթուն, տնակ, հյուղակ/, հայերեն՝ կացարան, ոուսերեն՝ կատ-արմա . Հիշյալ տերմինը քրդերենում ստացել է քառիմաստի նեղացում, ոչ -ը՝ միայն գառնանոցի իմաստ:

ե/ մաղալ / մար'ալյ, քրդերեն՝ մանր եղջերավոր անասունների արոտատեղի, հանգստավայր, պարսկերեն՝ մար'ալ ունի նույն իմաստը, առանց անասունների: Նույն արմատից է քիում ոուսերեն մօրիլա քառը, որը, ինչպես գիտենք, նշանակում է հանգստարան / գերեզմանատուն/:

զ/ դիալգա / զնալգե /, քրդերեն՝ խոշոր եղջերավոր անասունների հավաքատեղի՝ քնակավայրում: Այս տերմինը քաղկացած է երկու քառից: Առաջին՝ զնալ, պարսկերեն՝ թալ / նախիր/; թթ պարսկերեն՝ րա, հայերեն՝ զան / տեղ, վայր/: Այսպիսով, զնալգե -ն նույն բալերան պարսկերեն ձևն է, որը նշանակում է նախրի հավաքատեղի:

է/ դրունգա / դրունգե /, քրդերեն՝ մանր եղջերավոր անասունների կերակրման տեղ դրում / քակում, տան կողքին/, ճմունը: Տերմինը քաղկացած է երկու քառից՝ ճեր կամ դրունց, նշանակում է շեմք, այսինքն՝ շեմքին կից վայր:

ը/ ոռշմալ / Ք' աշալ /, քրդերեն օգտագործվում է կոնի իմաստով։ Հայտնի է, որ քրդական կոնը հիմնականում այծի և մազից է եղել։ Հետաքրքիր է, որ տերմինը կազմված է երկու բառից՝ ք' աշակ և մալ տուն, ունեցվածք, ապրանք։ Ուշը / ք' աշա /, քրդերեն՝ սև, պարսկերեն՝ ք' իշրուրդ իմաստը կրող բառն է, և սև գույնը, անշուշտ, քրդերենում ըխում է հենց նյութից, այսինքն՝ սև քրդից /մազից/, որից պատրաստվում էր վրանը։ Ուշը / ք' աշա միանալով մալ / տուն, ապարանք, ունեցվածք/ բառին, տալիս է,, սև վրան,, քրդերեն գործածվող տերմինը։

4. Քրդերեն նման տերմիններն ու հասկացությունները ըազմաթիվ ու ըազմազան են, սակայն մենք անդրադարձանք մի քանիսին միայն, որոնք մասնավորապես առնչվում են անասնապահության հետ։ Այս տերմինները մեծ հետաքրքրություն են ներկայացնում և, անշուշտ, կարիք ունեն ավելի խոր ուսումնասիրության։

#### Էմմա Պետրոսյան

### ՈՒԳԳՈՒՐՆԵՐԻ ԹԱՏԵՐՍԿԱՆԱՑՎԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄՆԵՐԸ

1. Ույզուրները կենտրոնական Ասիայի հնագուրց երկրագործ թուրքական ժողովուրդ են։ Տակավին վաղ միջնադարում ունեցել են գիր ու գրականություն։ Այժմ ապրում են Ղազախտանի, Կիրգիզիայի, Ուզբեկստանի հարավային մարզերում և Սինցյանում /Չինաստան/։

2. 1979թ. ույզուրա - դունգանական ջոկատի կազմում դաշտային աշխատանքների ժամանակ հավաքել ու զրանցել եմ նրանց ժողովրդական վարային ու թատերական մշակույթին, ինչպես նաև տոներին, հարսանեկան ու կենցաղային շատ սովորույթների վերաբերող նյութեր։

3. Թատերականացված մի շարք ներկայացումներ ու պարեր կապված են տոների / ըարաթ-հեյթ, ոռոգ / ռամազան, նովրուզ / հետ։ Բազմաթիվ զվարնալի տեսարաններ, խաղեր, պարեր տեղի են ունենում օդա նստելու /մաշրաք/ ժամանակ։

ա/ Գարնանը՝ նովրուզին, կազմակերպել են թոշունների ու կենդանիների մրցույթներ, որով գուշակել են զալիք երկրագործական տարրական որպիսությունը։

բ/ Քարաթ-հեյթի հանդիսությունն ուղեկցվել է ջահավառ շքերթով, որին մասնակցել են երիտասարդ տղաներն ու աղջիկները, դեմքերին դղմիկից պատրաստած դիմակներով։ Տոներին կատարել են ծիսական երգեր ու պարեր։

զ/ Առավել հանդիսավոր է եղել ռամազանի օրը: Երեկոյան երիտասարդները հավաքվել են թաղերով / մահալլյա/, ոմանք դիմակներ դրած, մյուսները ջահերով կամ ծաղկեպսակ մոմերով / գյուլդասատ/, ինքնասարք փայտե ծիերով, նավակ վարելով, ըստ որում վերջիններս պարով մրցել են միմյանց հետ:

Երթն անցել է թաղերով, տնե-տուն, երգ ու պարով, որի համար նվերներ են պահանջել:

ղ/ Զմուն օդա նստելը / մաշրաք/ ուղեկցվել է խաղերով/օյին/, նապաստակի, հղի կնոջ զգեստավորմամբ, նվազով / ուսպաֆի, դութար, դափի/, ամուսին գույզերի պարերով:

4. Ույզուրական մշակույթում մեծ տեղ են գրավել քալանդարները / գուսան/, որոնք երգել են սիրավեպեր, պարել սապայների / երաժշտական գործիքի մի տեսակ / նվազակցությամբ: Գարնանը գյուղերով մեկ շրջել են լարախաղացներ / դարշի/, փայտոտնուկներ / յաղաշաղի/:

5. Ույզուրական ժողովրդի հոգևոր մշակույթով ոչ ոք չի գքաղվել և մեկամսյա դաշտային գործուղմամբ հնարավոր չէ լուրջ եզրակացություններ անել: Այդուհանդերձ, նախնական դիտումները թույլ են տալիս ասելու, որ նրանց մշակույթում առկա է երկու շերտ, որոնցից մեկը կապվում է թուրք-մհեղական, իսկ մյուսը՝ ավելի վաղ՝ ըուն էթնիկ շինական ավանդութային պատկերացումների հետ:

#### ԺԵՆՅԱ ԽԱՀԱՄԱՐՅԱՆ

#### ԹՌՉՆԱՅԻՆ ԿԵՐՊԱՐՄԵՐԸ ՉՈՒԿՈՏՍ-ԷՍԿԻՄՈՍՅԱՆ ՊԱՐԵՐՈՒՄ

1. 1973-74թթ. ՍՍՀՄ ԳԱ Ազգագրության ինստիտուտի Հեռավոր Արևելքի տեղաքնիկ ժողովուրդներին հետազոտող գիտարշավի մի ջոկատ, պատմ. գիտ. թեկնածու Մ. Թա. Ժորնիցկայայի ղեկավարությամբ, գրանցեց շուկոտա-էսկիմոսյան մի շարք պարեր, այդ թվում և թոնապարեր, որոնց շարժական տեքստերը համապատասխանում են շուկոտա-էսկիմոսյան մտածելակերպին, հետազոտմ որոշակի նպատակ՝ տվյալ թունային կերպարի պատկերում՝ արտաքին ու ներքին հատկանիշներով, ըստ որում, թունապարերից յուրաքանչյուրին հատուկ են նախնադարյան մարդուն ընորոշ քազմաթիվ զծեր ու պատկերացումներ:

2. Ընդհանուր առմամբ թունապարերը հինգն են՝ կտրավի, քաղի, մայի / որոր / և ազոավի տարբերակներով, որոնք միմյանցից զա-

Նազանվում են անհատական ընկալմամբ և կատարողական-արտահայտչական երանգներով:

3. Հիմնական կատարողները կանայք են, պարում են նստած վիճակում՝ իրանով, զլիով ու թերով: Այսպիսի պարերը հառուկ են սահմանափակ պարագաներին և պարագաների պատմությանը հայտնի են նստմանց պարեր տերմինով:

4. Ինչպես շուկոտա-էսլիմոսյան պարերն առհասարակ, այնպես և թոշնապարերը կատարում են պարերգի, թոշնին ընորոշ կանչերի և ոիթմիկ զարկերի ուղեկցությամբ: Պարին նախապատրաստվում են անհրաժեշտ պարագաների / փետուրներ, հատուկ նակատագարդ կապեր և այլն/ ծեռք ըերմամբ:

5. Շուկոտա-էսլիմոսյան ավանդական ըանահյուսության մեջ որպես հնավուրց պաշտամունքային կերպար ըաղառիկ տևող ու ճանաչում է գտել ազոավը: Նրա վարքագծին ընորոշ է, նախ, իմաստությունը, ապա՝ ֆիզիկական ու հոգեկան մեծ ուժը: Ազոավն արարիշ է, մասնակից առաջին մարդու արարմանն ու կատարելագործմանը: Նա է մարդուն սովորեցրել իոսեղ՝ հազնվել, ըալարարել իր պահանջմունքները և, ամենակարևորը՝ փայտից պատրաստել է ծիսա-պաշտամունքային սրբազն զործիք / ցորչելու կամ զառ-ուցման /, որից հնարավոր է կրակ ստանալ, ապա նվիրել մարդկանց:

6. Ազոավը նաև ազգային հերոս է՝ լույսի հայթայթողը, շարողիներից արևին ու երկնային լուսատուներին ազատողը: Իր արարչագործական ու հերոսական գործունեության ընթացքում ազոավը փոխհարաբերությունների մեջ է մտել նաև շատ գազանների ու թոշունների հետ և ըստ էության դարձել նրանց արարիշը ևս: Ավանդություններում համախ նույնիսկ նշկում է, թե ինչ նյութից է կերտել նրանց: Ազոավն, այնունետև, օգտիվելով իր կախարդական հատկանիշներից, հերոսական արարքներին միահյուսել է նաև հմայությունները:

7. Այս միջոցով նա իր ընութագրի առանձնահատկությունները փոխանցել է տարբեր կենդանիների ու թոշունների, այդ թվում՝ արծվին, ջուին, ծային, կոռւնկին, կաթավին, ըաղին և այլոց, որոնցից յուրաքանչյուրն իր կենդանական ու երեակայական կերպարներով թելադրել է պարերի արտահայտչական, շարժական կառուցվածքի ստեղծումը, ինչպես և ձևավորել թոշնային կերպարները: Այս ամենի ձևավորման ընթացքում էլ լեզենդներում առաջացել են պատճառարանական / էթիոլոգիկ / թեմաները:

8. Ազոավի, ծայի, կոռւնկի, կաթավի ու ըաղի թոշնապարե-

ըի շարժական տեքստերում արտահայտվում են նաև կենդանական խիստ ընդգծված թեմաները, ինչպես, օրինակ՝ ազոավի մշտապես անկուշո, քաղցած ու ազահ հատկանիշը, որի համար էլ նա համախ դարձել է խորամանկ դիվանագետ ու մարպիկ ծեռնածու / Թրիքստեր/:

9. Զուկոտա-էսկիմոսյան քանահյուսությունը Ներծծված է երկրային ու երկնային չար ու քարի քազում կերպարներով, որոնցից շատերը, սակայն, պարերում արտահայտություն չեն գտել: Զուկոտա-էսկիմոսյան պարարվեստը և առհասարակ մշակույթը նախնադարյան մարդու անմիջական մտածողության արտահայտություն է:

### Էմմա Կարապետյան

ԵՐԵՎԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԻ ԿԱԶՄԻ ՅՈՒՐՍՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ  
/ Ըստ Երևան քաղաքի ընակչության էթնոսոցիոլո-  
գիական հետազոտության նյութերի/

1. 1970թ. Համամիութենական մարդահամարի տվյալների համապատասխան ցույց տվեց, որ Երևանի ընտանիքի միջին կազմը 4,5 մարդ է, որը համեմատական ամենաըարձր ցուցանիշն է Սովետական Միության քոլոր, ըստ որում նաև միջինասիական ռեգիոնի հանրապետությունների մայրաքաղաքների /Ֆրունզե, Աշխարաղ, Դուշանե, Տաշքենդ/ մեջ, հանրապետություններ., որոնք ընդհանուր առմամբ աշքի են ընկնում քաղաքային և զյուղական ընակչության ընտանիքի ամենաըարձր միջին կազմով: Երևանին է ընկնում նաև հինգ և ավելի հոգիանոց ընտանիքների ամենաըարձր ըաժինը:

2. 1950թ. մինչև մեր հարցման պահն ընկած ժամանակամիջոցում, տղաըերքի զգալի նվազմամբ հանդերձ, ընտանիքի կազմը չի փոփոխվել, որը վկայում է, որ միջին կազմի քարձր ցուցանիշը ծեավորվել է ընտանիքի կազմի քարդացման հետևանքով: Ըստ այդմ, նկատվում է ընտանիքի կազմի համահավասարման միտում ի հաշիվ, մի կողմից՝ երկու-երեք, մյուս կողմից՝ յոթ և ավելի հոգիանոց ընտանիքների թվի կրծառման, զգալի է նաև չորս, հինգ և վեց հոգիանոց ընտանիքների ավելացումը՝ որպես արգասիք սերնդային կազմի ավելացման և շեղակի գծով ազգականների քացառման:

3. Ընտանիքի կազմի կառուցվածքի տվյալների վերլուծումը թույլ է տալիս պնդելու, որ Երևանյան ընտանիքը գտնվում է ծեավորման պրոցեսում, որում տակավին զգալի է ավանդութային ընտանեկան կողմնո-

բոշման դերը:

4. Ավանդութային ընտանեկան վարքագծի հարաբերական կայունությունն էր հերթին ջացատրվում է ջաղաքի պատմականորեն կազմավորված յուրաքատնություններով և գլխավորապես դրա ընակչության ժեավորման ընույթով՝ հիմնականում ի հաշիվ հայ ընալիշության ներհոսով, որում գերակշռում է գյուղական ընակիշների տոկոսը: Վերաբնակիշների ըոլոր խմբերը այս կամ այն շափով միևնույն էթնոսի ավանդույթների կրողներ են, տարբերությունները արտահայտվում են ավանդութային պահանվածության աստիճանով, կապված նախորդ ընակավայրերի հետ: Երեանի մենազգյա կազմը արդի ջաղաքային ընտանիքի մողելի կազմավորման գործում՝ ավանդութային էթնիկ վարքագծի պահանման ըարենպաստ միջավայր է հանդիսացել:

### Կարլեն Սեղբոսյան

ԱՎԱՆԴՈՒԹՅՈՒՆԻ ՄՐՏԸՆՈՅՑՏՈՒԹՅԱՆ ՄԻ ՔԱՂԻ ՅՈՒՐԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄՐԴԻ ՔԱՂԱՔԻ ԵՎ ՄՐԴՅՈՒՆՄԲԵՐՄԿԱԼԻ ԱՎԱՆԴՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՄԵՋ  
/ ըստ Հայկական ՍՍՀ ազգագրական նյութերի /

1. Ավանդութայնությունը տարբեր արտահայտությամբ հատկանշական է աշխարհի ժողովուրդներին : Էթնո-մշակութային ավանդույթները միշտ նշանակալի տեղ են զրադեցրել նաև հայերի ծիսա-տոնական կյանքում և առօրյա կենցաղում, սակայն նկատելի է, որ վերջին քսան տարվա ընթացքում էլ ավելի նպաստավոր պայմաններ են ստեղծվել դրանցից շատերի վերածնման, վերափոխման համար: Ավանդույթները, դրանց արտահայտությունները գնալով հարստացնում են զարգացած սոցիալիզմի շրջանի մշակույթն ու ապրելակերպը, սակայն դրանց վերածնումն ու ներդրումը միաժեսակ և ուղղագիծ չի ընթանում: Սոցիալիստական ապրելակերպին, կենցաղա-մշակութային ժամանակակից պահանջմունքներին համապատասխան փոփոխվում է դրանց թե ձևը, թե ըովանդակությունը:

2. Ջաղաքի և արդյունարերական ավանի ընակշության մշակույթի մեջ և կենցաղում ավանդութայնության արտահայտությունների առանձնահատկությունների քննությունը հանգեցնում է այն հետեւթյան, որ կյանքի ու կենցաղի տարբեր ասպարեզներում ջաղաքի ժամանակակից ընակշությանն ավելի է հատուկ որոշակի ավանդութայնությունը, քան ժամանակակից արդյունարերական ավանի ընակշությանը:

Այդ երեսույթի հիմնական պատճառները պետք է որոնել արդյունաբերական ավանի ընակչության նորովի, յուրահատուկ ծեավորման, նրա արդյունաբերական ու սոցիալ - մշակութային քնույթի կազմակորման առանձնահատկությունների մեջ, որոնք տարօների մեջ են քաղաքի համապատասխան պարամետրերից պատմականորեն որոշակի ընթացք ունեցած, տնտեսական երթեմն ուսույն հիմունքներով զարգացած, քաղաքային ապրելակերպին հատուկ դարձած քիչ թե շատ կայուն մի քանի գծերով:

3. Ավանդութայնության արտահայտություններն արդի շրջանում կարելի է ըաժանել երկու իմքի:

ա/ դրական ավանդույթներ, անցյալի արժեքավոր ժառանգության արտահայտություններ: Կյանքի նոր պահանջմունքներին համապատասխան վերափոխվելով, էթնո-մշակութային այդ ավանդույթները անըակտելիորեն միավորվում, միաձուլվում են նորութային երեսույթների հետ և ժամանակակից կենցաղին ու մշակույթին հաղորդում էթնիկ երանգ, ազգային ծե: Այս տիպը կարելի է ըաժանել երկու ենթատիպի՝ ազգային դրական ավանդույթներ, որոնք հարստացնում են նորայնացվող կենցաղը, և ավանդույթների սոսկ ծեական մնացուկներ, որոնք զրեթե ըովանդակազրկված են զառիս դրական առումով և որոնք հակված են վերածվելու ըացացանի, ժխտելի երեսույթների՝ շափազանցությունների, ցուցամուլության, ծեամոլության և այլն:

բ/ ժամանակակից պայմաններում ըացասական այնպիսի ավանդույթների ու ծեսերի չպատճառաշախած, աղավաղված վերակենդանացումներ, որոնք եթե նույնիսկ անցյալում ինչ-որ արդարացում էլ ունեցել են, ապա այսօր վնասակար դեր են խաղում սոցիալիստական նոր ապրելակերպի կազմակորման և հարստացման գործում:

4. Քաղաքի և արդյունաբերական ավանի ընակչության մշակույթի մեջ ավանդութայնության արտահայտությունների նշված առանձնահատկությունների հետազոտությունն ունի ոչ միայն տեսական-մեթոդական ու գիտա-մանաշղողական, այլև գործնական-կիրառական նշանակություն՝ վեր են հանկում ու պրոպագանիզում այդ արտահայտությունների դրական կողմերը, ըացահայտվում ու այպանվում ըացասական երեսույթները, գիտակցված կերպով ուղղություն է տրվում ժամանակակից էթնո-մշակութային զարգացման պրոցեսին, ստեղծագործաքար ներդնելով դրա մեջ անցյալի արժեքավոր ժառանգությունը:

ԱՎԱՆԴՈՒԹՅՈՒՆԻ ՀՄՐՑԸ ՀՄՅԵՐԻ ՀՄՐՄԱՆԵԿԱՆ

ՄՐՄՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

/ Ըստ Երևան քաղաքի քնակշության էթնոսոցիոլոգիական  
հետազոտության նյութերի/

1. Երևան քաղաքի էթնոսոցիոլոգիական հետազոտության կարևոր խնդիրներից մեկն էլ հայերի ընտանեկան, մասնավորապես, հարսանեկան արարողությունների արդի վիճակի ուսումնասիրումն է, որը հնարավորություն կնծեռի ուրվագծելու առաջիկայում այդ արարողությունների զարգացման հիմնական միտումները:

2. Հարսանեկան արդի արարողություններում ավանդութային քազմաթիվ նորմերի պահանումը քացատրվում է օրյեկտիվ ու սուբյեկտիվ մի շարք գործոններով։ Քանի որ ամուսնությունն ու հարսանիքը կապված են մարդու կյանքի շրջադարձային պահի հետ, ապա դրա քարեհաջողության հնարավորին շափ ապահովումը կապվում է նախնիների<sup>9</sup> դարերի ընթացքում մշակած պատրաստի ծեսերի կատարման հետ։ Այսուղից էլ ընտանեկան արարողություններում զգալի հակվածությունը դեպի վարքի ավանդութային երևույթները, որով էլ պայմանավորվում է քազմաթիվ և քազմազան մնացուկների կենսունակության պատճառն ընտանեկան հարազերությունների ոլորտում։

3. Ավանդութային նորմերն այդ միջավայրում անքակտելիորեն կապված են համապատասխան ավանդական պատկերացումների հետ, ուստի հենց դրանք էլ որոշում են վարքի կոնկրետ նմուշները։ Մտածողություն-վարք փոխապահությունը պայմանավորված է ինչպես միկրոմիջավայրով / ընտանիք/, այնպես էլ մակրոմիջավայրով / կոլեկտիվ/: Ընտանեկան արարողությունների ոլորտում մտածողության որոշակի ստերեոտիպերի մշակման և ձևավորման երկարաժամկետ ու քարդ պրոցեսում որպես մեխանիզմ է ծառայում սերունդների վարքի փոխանցումը։

4. Վարքի և մտածողության ավանդութային նմուշների հանդեպ հակվածության աստիճանը որոշող կայուն ինդիկատորներից է ամուսնությանը ծնողական համաձայնությունն առնելու անհրաժեշտության հարցը։

Հարցաթերթի մեջ մտցված „ Ամուսնության համար անհրաժեշտ է արդյոք ծնողների համաձայնությունն ստանալը,, հարցի միջոցով քյուարութեան մեջ մտցված ,,

Ռեղանում են ոչ թե պարզապես հարսանեկան արարողության ավանդութային առանձին պատկերացումները, այլ ավելի լայն՝ ընտանեկան-ամուսնական հարաբերությունների միջավայրի մի սմբող շարք փոխապակցված իրադրություններ:

Տվյալ հարցը լուծելու նկատմամբ որոշակի վերաբերմունքն ընդհանուր առմամբ ըացահայտում է ավանդութային պատկերացումների /մտածելակերպի/ ողջ համակարգը, կոնկրետ դեպքում / ընտանեկան-կենցաղային մակարդակով/ ամուսնության կազմակերպման և հարսանեկան հանդիսության անցկացման արարողությունը:

5. Էթնոսոցիոլոգիական հետազոտության արդյունքները վկայում են, որ տվյալ հարցը լուծելիս հիմնական, որոշիչ գործոն է ասրիքը, ընդ որում որքան այն մեծ է, այնցան ուժեղ է հանդես գալիս հակածությունը ծնողական համածայնության պարտադիր ավանդութային կարծիքին: Համանման ներգործություն են ունենում կրթական մակարդակն ու սոցիալ-դասային պատկանելությունը. սեռա-հասակային կառուցվածքի տեսակետից տվյալ դեպքում սեռի գործոնը նշանակություն չունի:

6. Ամուսնության գործում ծնողական համածայնության նկատմամբ դրական և բացասական վերաբերմունքն անցականելու հետ, ընդ որում ավանդութային մտածելակերպը թելադրում է նաև ավանդութային համապատասխան ծեսեր /քավորի, ազաֆքաշու, հարսնաքրոջ և այլն/: Հենց փոխապահությունն էլ պարզորոշ ի հայտ է գալիս նաև հարսանեկան հանդիսության ընթացքում՝ ավանդութային կայուն պատկերացումները ոչ միայն իրականացվում, այլև ավանդաբար ցուցագրվում են / ազգային տարրերով հարսանիք անցկացնելու օգտին է արտահայտվել հարցվածների ավելի քան 70 օ/օ-ը/: Ավանդութային պատկերացումներից հեռալիս առավել նշանակալի են դառնում ամուսնության հաստատումը կազմակերպելու նոր ձևերը, ինչպես, օրինակ՝ հարսանեկան նորածեխնչույթը և մանավարհորդությունը:

#### Ռուբեն Կարապետյան

ՄԴԱՊՏՍՑԻՈՆ ՊՐՈՑԵՍՍՆԵՐԸ ԽՎ ՆԵՐՊԱՐԹԱԿ ԽՄԲԾՐԸ

/ըստ Նրեան քաղաքի ընակչության էթնոսոցիոլոգիական հետազոտության նյութերի/

1. Մեքենայական արտադրության զարգացման ըուռն տեմպերը, որոնց

գուգակցվում են քաղաքային քնակչության արագ ամով և գյուղում քաղաքային մշակույթի առածմամբ, կյանքի են կոչում ազգային մշակույթի կառուցվածքային և որակական փոփոխություն։ Բնակչության որոշակի տեղաքաշիումը հոգուտ քաղաքների / ՀՍԽՀ քաղաքներում ապրում է քնակչության 66 օ/օ / առաջացնում են մի շարք պրոցեսներ, որոնց մեջ կարելի է նշել ազգային մշակույթի աղապտացված առանձնահատուկ գծերի դրսեորումը արդի քաղաքային միջավայրում։

2. Այդ առանձնահատուկ գծերի դրսեորման պատմառներից են քաղաքի քնակչության ճեավորման սոցիալ-տնտեսական պայմանները, որոնք ունեն թե ընդհանուր, թե միայն տվյալ քաղաքին ընորոշ առրրեր, ինչպես նաև ուրբանիզացման նախօրյակին եղած տվյալ ազգության հասարակական կենցաղի ֆոնը։ Այդ ամենով է պայմանավորվում քաղաքի միջավայրի որոշ առանձնահատկությունների առաջացումը, փոփոխությունը և գոյատեսումը, որոնք ընորոշ են այդ պրոցեսին ընդհանրապես, տվյալ ազգությանը՝ մասնավորապես։

3. Քաղաքների քնակչության ճեավորման գլխավոր աղբյուրը վերաբնակիչ խմբերն են, ուստի ամեն մի քաղաքում կատարվում են այդ խմբերի աղապտացիոն պրոցեսներ, որոնց ընթացքում էլ տեղի է ունենում այդ առանձնահատուկ ազրելակերպի տարրերի ճեավորումը։

4. Աղապտացիոն պրոցեսի օրինաշափ փուլերում առաջանում են տարրեր որպես ներպարփակ մարդկային խմբեր, որոնք հիմք են հանդիսանում նշված առանձնահատկությունների դրսեորմանը։ Այդ խմբերի առաջացումը, գոյատեսումը և անհետացումը կախված է քաղաքի սոցիալական կառուցվածքից, ժողովրդական տնտեսությանը ընորոշ զարգացման ընթացքից։

### Ռուբեն Օհանջանյան

ԱԶԳԱՑԻՆ ՀԱՐՄԱՆՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԷԹՈՍՈՑԻՈԼՈԳԻԱԿԱՆ  
ՈՒԽՈԽՄԱՍՍԻՐՄԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑ  
/ Ըստ Երևան քաղաքի քնակչության էթնոսոցիոլոգիական  
հետազոտման արդյունքների/

Ազգային հարաբերությունների վերլուծությունը կատարվում է ազգային դիրքորոշումների և ազգային ստերեոտիպերի միջոցով։

1. Դիրքորոշումը դա որոշակի գործողություն կատարելու պատրաստ լինելն է։ Այն պատմականորեն ճեավորված պահանջմունքնե-

րի և ղրանց ըավարարման օքյեկտիվ հնարավորությունների արագոլումն է / գործունեության ուղղվածության ձևով/: Ազգային դիրքորոշումները բացահայտվել են<sup>9</sup> ա/ խոռ ազգային ամուսնությունների, ը/ըազմազգ կոլեկտիվում աշխատելու նկատմամբ առկա վերաբերմունքով:

Հետազոտության նյութերը ցույց են տալիս, որ Նրեան քաղաքի ընակչությանը ընորոշ են ղրական էթնիկ դիրքորոշումներ: Հարցվողների 90,0 օ/օ-ը գտնում է, որ համատեղ աշխատանքում ազգային կազմը շի ազդում կոլեկտիվի հարաբերությունների վրա:

Ազգային դիրքորոշումների ըովանդակությունը մեծապես կախված է անձանց մշակութային, սոցիալ-մասնագիտական մակարդակից, ժողովրդագրական տվյալներից, հոգեքանական առանձնահատկություններից և այլն: Միջազգյա / խոռ/ ամուսնությունների նկատմամբ ֆիզիկական աշխատանքով զբաղվողների բացասական դիրքորոշումների տոկոսը մտավոր աշխատանքով զբաղվողների համեմատությամբ մեծ է: Կանայք ավելի բացասական դիրքորոշում ունեն դեպի միջազգյա ամուսնությունները, քան տղամարդիկ: Նյութերը ցույց են տալիս, որ տարիքի զարգացման հետ մեծանում է դեպի խոռն ազգային ամուսնություններն ունեցած բացասական դիրքորոշումների տոկոսը:

2. Ազգային հարաբերությունների ինդիկատոր են նաև ազգային ստերեոտիպերը: Ազգային ստերեոտիպն ազգի անդամների սխեմայացված, պարզեցված պատկեր է՝ հուզական երանգավորմամբ:

Էթնոսցիոլոգիական մեթոդը հնարավորություն է տալիս վերլուծելու ազգային ստերեոտիպերը վերջինիս բաղադրիչների միջոցով: Բացահայտվել են հայկական էթնոսի հետ առավել ինտենսիվորեն հաղորդակցություն ուսական և վրացական էթնոսների, ինչպես նաև սեփական՝ հայկական էթնոսի ընորոշ գծերը:

Ծովանդակային առումով ստերեոտիպերը դասակարգվել են<sup>10</sup>

1. ըարոյա-էթիկականի, 2. հուզա-կամայինի, իսկ հուզական ըևեռացմամբ՝ ա/ ղրականի և ը/ բացասականի: Ազգային ստերեոտիպերի ըովանդակությունը նույնպես կախված է անձանց սոցիալ-մասնագիտական, կրթական մակարդակից, ժողովրդագրական տվյալներից, գործունեության որոշ ոլորտներից / միջէթնիկ շփման ձևեր/ և այլն:

Մտավոր աշխատանքով զբաղվողները ֆիզիկական աշխատանքով զբաղվողների համեմատությամբ ավելի շատ բացասական ստերեոտիպեր են վերագրում թե սեփական, թե այլ էթնոսների: Տղամարդիկ կանանցից շատ են հուզա-կամային էթիկական ստերեոտիպեր վերագրել էթնոսներին

Էթնիկ ստերեոտիպերն առավել մեծ տարածում ունեն 30-50 տարեկանների շրջանում։ Ամեն տարի և համայնքապետության սահմաններից դուրս եկող անձանց միջավայրում ըացասական էթնիկ ստերեոտիպերի քանակը հանրապետության սահմաններից դուրս չեկողների համեմատությամբ զիշէ։ Առաջինները երկրորդներից ավելի շատ են ըացասական ստերեոտիպեր վերագրում սեփական էթնոսին։

Ստացված ըազմաթիվ էթնիկ ստերեոտիպերը չեն տարրերվում զանազան սոցիալ-ժողովրդագրական՝ դերերում գտնվող անձանց վերագրվող ստերեոտիպերից։ Սա ցույց է տալիս, որ էթնիկ ստերեոտիպի զոյատևման հիմնական նախապայմաններից է ցեղանունը /էթնոնիմ/, որն ամբողջացնում, ներառում է իրականության ըազմաթիվ երևույթներ թե պատկերային, թե ըառային ձևերով։

3. Էթնիկ դիրքորոշումների և էթնիկ ստերեոտիպերի միջև հուզական ընեղուացմամբ համապատասխանություն շնկատվեց։ Սա ցույց է տալիս, որ անհրաժեշտ է՝ ա/ ուսումնասիրել էթնիկ դիրքորոշման կապն էթնիկ ստերեոտիպի ամբողջական պատկերի, այլ ոչ միայն ըաղաղոիշների հետ, թ/ ըացահայտել պրոբլեմային իրավիճակներում վարքի դրդապատճառների առաջացման գործում հոգեկան երևույթների նշանակությունը։

#### Հրանուշ Սոաթելյան

#### ՉԵՐՉԵԶԱՀԱՅԵՐԻ ՀՅՈՒԽԻ ԽՄԱԳԻՏԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԻ ՇՈՒՐՋԸ

1. Վերջին ժամանակներս սովորական ազգագրության մեջ մեծ ուշադրություն է դարձվում էթնիկ ինքնազիտակցության՝ որպես էթնիկ պատկանելությունը որոշող տարրի դերին։ Մարդահամարի ժամանակ այս տարրը կամ, որ նույնն է, էթնիկ պատկանելության սուրյեկտիվ որոշումը համարվում է ամենազլիավորը։ Սակայն հայտնի են դեպքեր, երբ այս կամ այն իրավիճակում առանձին մարդիկ կամ մարդկանց խմբեր ղժվարանում են որոշել իրենց էթնիկ պատկանելությունը։ Հենց այս կարգի խմբերից են եղել չերքեզահայերը XIX դ. վերջին-XX դ. սկզբներին։

2. Մինչև XIX դ. կեսերը, ապրելով չերքեզների մեջ, այս խումքն իրեն համարել և անվանել է հայ։ Այդ հանգամանքին

խորապես նպաստել է Նրանց կրոնական պատկանելությունը և այն հասարակական դիրքը, որ ունեցել են չերքեզների մեջ: Տվյալ դեպքում կարենոր է եղել ոչ այնքան ազգային ինքնազիտակցությունը, որքան ինքնանվանումը, քանի որ այդ ինքնատիպ,, հայկական խավի,, մեջ ընդգրկվող քոլոր մարդիկ զբաղեցրել են համեմատարար քարձր հասարակական դիրք:

3. Վավերագրերն ու ավանդությունները վկայում են, որ ռազմաթիվ չերքեզներ, հույներ, լեռնային հրեաներ և նույնիսկ թաթարներ ընդունել են օրիստոնեություն և մտել այդ ինքնատիպ արտոնյալ դասի մեջ: Այսպիսով, այսպես կոչված չերքեզահայերի իրական էթնիկ կազմը շատ խայտարդետ է եղել, չնայած հիմնական քաղաղրիչ մասերը կազմել են հայերը և չերքեզները: Սրանք ըոլորը չերքեզական լեռներում իրենց անվանել են հայ, դրա ներքո նկատի ունենալով ոչ այնքան էթնիկ պատկանելությունը, որքան լուսավորչական հավատքին դպանելը, քանի որ կարենոր էր հատկապես,, հայ,, կոչվելը, մի հանգամանք, որ պայմանավորված է եղել հատկապես սոցիալ-տնտեսական անհրաժեշտությամբ:

4. XIX դ. սկզբներին, քաղաքական նոր փոփոխված իրադրության մեջ, չերքեզահայերը հյուսիս-արևմտյան Կովկասում գրկվում են իրենց իրավունքներից և աստիճանաբար լքում լեռները: Նրանց հիմնական մասը 1839թ. հիմնադրում է Արմավիրը: Նոր պայմաններում վերանում է Նրանց,, հայ,, լինելու սոցիալական անհրաժեշտությունը: Էթնո-մշակութային իմաստով ամենատարբեր տարրերից քաղկացած այս խումբը կանգնում է իր հեղինեղուկ, անորոշ էթնիկ պատկանելությունը որոշակիացնելու անհրաժեշտության առաջ: Ակսվում է գիտակցվել ինչպես չերքեզական մշակույթի խորթությունը, այնպես էլ,, հայ,, ինքնանվանման անհամապատասխանությունը:

5. Այս իրավիմակում մի ինչ-որ ժամանակաշրջան չերքեզահայերը ներքուստ համախմբվում են, հակադրելով իրենց էթնիկ,, ես,, -ը թե հայերին, թե չերքեզներին: Առաջանում է,, մեսք-նրանք,, զգացումը ինչպես այս, այնպես էլ մյուս էթնոսի հանդեպ: Աստիճանաբար ծեավորվում է որակապես նոր էթնիկ ինքնազիտակցություն, նրանց միավորում է հատկապես այն, որ իրենք,, չերքեզահայեր,, են, ինքնանվանում, որը, փաստորեն, մատնանշում է էթնո-մշակութային իմաստով նոր խմբի առաջացումն ու սահմանազատումը, մի կողմից՝ չերքեզներից, մյուս կողմից՝ հայերից:

ՀԱՅԿԱՆԱՆ ԿՈՒՄՈՒԼՅԱՏԻՎ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԵԶԻՄԹԸ  
/Ըստ հին ու նոր գրառումների /

1. Կումուլյատիվ հեքիաթը յուրահատուկ տեղ է գրավում հեքիաթի ժանրում։ Հեքիաթագիտական հետազոտություններում և հեքիաթների տիպերի ազգային ու միջազգային ուղեցույց-ցանկերում նկատելի տարակարծություններ կան կումուլյատիվ հեքիաթի տեսակային սահմանման, դասակարգման ու անվանման շուրջ։ Կումուլյատիվ հեքիաթի համակարգման և ընութագրման գոյություն ունեցող սկզբունքներից առավել մշգրիտն ու ընդունելին, մեր կարծիքով, Վ.Ց.Պրովալի կոմպոզիցիոն-կառուցվածքային մոտեցումն է։

2. Հայկական կումուլյատիվ ժողովրդական հեքիաթների հավաքումն ու հրազդակումը սկսվել է անցյալ դարի 70-80-ական թվականներից /Գ.Սրվանձտյանց, Ս.Հայկունի/ և շարունակվում է մինչև օրս։ Սակայն, այդպիսի հեքիաթների քանակը սահմանափակ է, որը ինչ-որ չափով գայմանավորված է ասցող-կատարողների սեռա-տարիքային համականիշներով և հեքիաթների այդ տեսակի հանդեպ քանահավաքների ունեցած առանձնահատուկ վերաբերմունքով։

3. Հայկական կումուլյատիվ հեքիաթների համակարգման ու դասակարգման հիմնական տարրերակից շափանիշը կոմպոզիցիոն-կառուցվածքային տիպերի քաժանումն է։ Այդ հեքիաթները կարելի է խմբավորել նաև ըստ գաղափարական ըովանդակության և կիրառական /Ֆունկցիոնալ/նշանակության։

4. Հայկական կումուլյատիվ ժողովրդական հեքիաթներին ընորոշեն հատուկ գեղարվեստա - արտահայտչական եղանակներ և լեզվա-ոճական միջոցներ։ Տարբեր ձևերով ու մակարդակներով կրկնությունը կումուլյատիվ հեքիաթի կառուցվածքային պարտադիր տարրն է։ Տիրապետող է նաև ոիթմիկ արձակով պատմելածեց, էպիտետների, մակդիրների և այլ քառականակցությունների առատությունը։ Կումուլյատիվ հեքիաթների հերոս-պերսոնաժները /կենդանական, քուսական, առարկայական, մարդկային ու գերքնական ծագմամբ/ հանդիս են գալիս ինչպես միատարր, նույնպես և խոր շաղկապված գործողություններով, ըստ որում, որպես կանոն, գերիշխում է մարդեղայնացումը /անտրոպոմորֆիզմ/, եթե ոչ մարդկային պերսոնաժները օժակած են լինում իսկական մարդկային

հատկանիշներով և գծերով:

5. Հայկական կումուլյատիվ ժողովրդական հեքիաթները մի շարք ընորոշ գծերով ու առանձնատկություններով առնչվում են ինչպես հեքիաթների մյուս տեսակներին / կենդանական, կենցաղային, կախարդական/, այնպես էլ բանահյուսության մյուս ժանրերին / առականական, երգ և այլն/: Հայկական կումուլյատիվ ժողովրդական հեքիաթների ըազմաթիվ գուգահեռներ կարելի է ցույց տալ աշխարհի շատ ժողովուրդների ըանահյուսության մեջ:

### Ռուգան Գրիգորյան

#### ԻՐԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՎԵՊԻ ՄՐՅԱԳԱՆՔՆԵՐԸ ԳԵՂԱԳՐՈՒԽԻԹԻ ԲԱՆԱԿՈՐ ՄՐՅԱԿՈՒՄ

1. Հայ ավանդական բանահյուսական սյուժեներին գուգահեռ, Գեղարքունիքի ըանավոր արծակում զգալի տեղ են զրավում հարեան ժողովուրդներից փոխառված վիպական սյուժեները/իրանական Ռոստամ Զալը, քրդական Ապուսեթե Բնալալը, Եիրին Շահը, Ալիֆն ու Քլեֆը, ինչպես նաև աղրքեջանական Քյոողլին/:

2. Ռոստամ Զալ վեպի, ինչպես նաև իրանական վիպական զրույցների մասին հիշատակությունը հայ իրականության մեջ սկզբնավորվել է Մովսես Խորենացու , , Հայոց պատմությամբ,, , արծագանքվել XI դ. Գր. Մազհիստրոսի , , Թղթեր , , -ում և ապա XIII դ. Կոստանդին Երզնկացու տաղերում:

3. Գրիգոր Մազհիստրոսի , , Թղթեր , , -ում պահպանված՝ իրանական վիպական զրույցներում կան այնպիսի մանրամասներ, որոնք չկան Ֆիրդուսու , , Շահնամե , , -ում: Այս հանգամանքը հաստատում է, որ Ռոստամին վերաբերող վիպական զրույցներն ավելի վաղ էին ըանալոր ավանդույթ դարձել մեր իրականության մեջ, քան , , Շահնամե , , -ի հանդես զալն է:

4. Այդ ավանդույթը հարատևելով, հասել է մինչև մեր օրերը: Գեղարքունիքում իրանա-քրդական վիպերգերն ու վիպական զրույցները պատմվում են թե իջրե ամրողջական ստեղծագործություններ, և թե հատկածար՝ այլ հեքիաթներում ու զրույցներում: Այս մանապարհով էլ վիպական օտարամուտ սյուժեների տեղայնացման երևույթ է Ակտում Գեղարքունիքի ըանավոր արծակում:

5. Իրանա-քրդական վեպերն իրենց արտաքին նկարագրով, գեղար-

Վեստական ծևով արձակ պատմվածքի՝ հեքիաթի, զրույցի են նման, տեղադրությունը հագեցած երգային շափածո հատվածներով, որոնք ասացողները կատարում են ջրդերեն կամ աղրքեջաներեն լեզուներով:

6. Հայ ըանահյուսության մեջ հնուց ի վեր իրանական վիպաշխարհի նկատմամբ եղած հետաքրքրությունը պայմանավորված է վեպերի ազատատենչ ոգով և համամարդկային զաղափարների հագեցվածությամբ, որով դրանք հոգեհարազատ են դարձել մեր ժողովրդին և այդ կերպ ստեղծվել է,, Ռոստամ Զալ,, հայ-իրանական վեպը, որն ըստ էության առնչվում է,, Սասնա ծոեր,, հայ ժողովրդական վեպի հետ:

Թամար Գևորգյան

ԼՈՌՈՒ ՊԱՏՄԱ-ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ՇՐՁՄԱՆ ԲԱՆԱՀՅՈՒԹՅՈՒՆՆ  
ԱՐԴԻ ՓՈԽՀՈՒՄ

/ ըստ հեղինակի գրառումների/

1. Տաս տարուց ավելի, մասնավորապես 1978-79թթ. գիտարշավ-ների ընթացքում Լոռու-պատմա-ազգագրական շրջանում գրառած նյութը հնարավորություն է ընծեռում համեմատական ըննության ենթարկելու ըանահյուսական արդի փուլի պատկերն ըստ մի քանի հատկանիշների:

Ա. Բանահյուսության ժանրային կազմը հարուստ է վիպական, քանաձևային, դարձվածքաբանական առումով: Նվազ կենսունակ են ընարական ըանահյուսության ծիսակենցաղային, հատկապես հարսանեկան երգերը: Ընարական ըանահյուսությունից կենցաղավարում են համբարձման ծեսի հետ կապված ջանգյուլումները:

Բ. Ավանդական ժանրերի գոյատեման հարցում առաջնությունը պատկանում է հեքիաթներին, առակներին, անեկդոտներին, ընաշխարհին ու պատմական դեմքերին վերաբերող ավանդություններին և սնահավատական գրույցներին:

Գ. Լոռու աշխարհագրական ողջ տարածքում, նույնիսկ առանձին գյուղերում նկատվում է ավանդական սյուժեների գոյատեմը, ինչպես նաև ավանդականի հիման վրա առաջացած տարբերակների առաջնությունը:

2. Հասարակական, քաղաքական տեղաշարժերի և առաջընթացի ազդեցությունը ըանահյուսության արդի փուլում զգալի է: Հասարակական նոր հարաբերությունները, կենցաղը, նոր օմքոնումներն ու պահանջները աստիճանաբարդուրս են մղել հին կենցաղի ու կյանքի հետ կապ-

Ված շատ երեսույթներ, հետևազար նաև քանահյուսական տեսակներ

3. Ներկա գրառումների գուգաղրումը անցյալ դարի երկրորդ կեսի և մեր դարասկզբի նույն շրջանից գրառած և արդեն հրաթարակված նյութերի հետ / Տ. Նավասարդյանի և Ռ. Լալայանի / ցույց են տալիս քանահյուսական նյութերի անխաթարության և հարազատության աստիճանը :

### Էսթեր Խեմչյան

#### ՇԱՄՇԵՐԻՆԻ ՇՐՋԱՆԻ ԲՍԽԱՀՅՈՒՍԱԿԱՆ ԽՅՈՒԹԵՐԸ /Ըստ հեղինակի գրառումների/

1. Շամշերինի շրջանի ընակչությունը արդի վիճակով ազգագրորեն հիմնականում համատարր է, չնայած որ նախնական տեղաշարժերի հետևանքով դեռևս գգալի է երեք շերտ՝ տեղաքննիկներ, նախկին դարձադիներ / XVIII դ. կ. /, արևմտահայեր / 1915-20թթ. գաղթածներ / :

2. Շրջանի աշխարհագրական դիրքը, կտրվածությունը արդյունաբերական կենտրոններից գգալիորեն նպաստել են ավանդական քանահյուսության պահպանմանը : Սակայն տեղական քանահյուսությունը քանահավաքների կողմից նվազ ուշադրության է արժանացել : Ըստ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի քանահյուսական արխիվի տվյալների, Շամշերինի շրջանի քանահավաքչության պատմությունը հետևյալ պատկերն է ներկայացնում :

ա/ Մատթեոս Մուրադյանց և Վարդան Տեր-Զարությունյանց-1882-1884թթ.:

բ/ Սարգիս Խորայելյան - 1945-47 թթ.:

գ/ Արագ Կարապետյան - 1960-ական թվ. / նպատակային / :

դ/ Էսթեր Խեմչյան - 1977-78-79թթ. / նպատակային / :

3. 1977-79թթ. մեր դաշտային աշխատանքների ընթացքում քանահյուսական նյութեր գրանցվեցին 45 քանասացից, որոնք ստորագրածանվում են հետևյալ սեռա-տարիքային խմբերի՝ 60-100 տարեկան՝ 19 տղամարդ, 14 կին, 30-50 տարեկան՝ 5 տղամարդ, 4 կին: Ուսումնասիրությունը պարզեց, որ՝

ա/ ավանդական նյութին տիրապետում են 60-100 սեռա-տարիքային խմբի քանասացները,

բ/ քնարական երգերի, հատկապես իաղիկների հիմնական կրողներն են կին քանասացները,

գ/ քանասացների ոեպերտուարը կայուն է, առկա է նախասիրու-

թյան պարագան,

դ/ ոեպերտուարի ծևավորման գործում նշանակալից ղեր է խաղում քանասացի գըաղմունքը,

Ե/ բանահյուսական որոշ ժանրերի / արձակ-պատմողական տեսակներ/ կենցաղավարումը կտպված է հավաքածեղիների ավանդույթի հետ:

4. Մեր կողմից երեք տարվա ընթացքում գրանցվել են տարբեր ժանրերի բանահյուսական նյութեր՝ հեքիաթներ / 54 միավոր/, հանելուկներ / 85-90 միավոր/, անեկղուներ-զրույցներ / 36 միավոր/, խաղիկներ / 70 միավոր/, օրինանքներ / 37 միավոր/, երգեր/աշուղական, կենցաղային, սիրո, եղերերգ, 25 միավոր/, սիրավեպ / 4 միավոր/, ինչպես նաև ծեսեր, սովորույթներ, հուշապատումներ, բանաձևային միավորներ, անեծցներ և այլն:

5. Բանահյուսական նյութի նախնական քննությունից հետևում է , որ՝

ա/ ավանդական բանաձևային և չափածո ժանրերը խիստ կայուն են,

բ/ երգի տեսակներում հնին զուգահեռ ստեղծվում են նոր մոտիվներ / հատկապես կենցաղային երգերում/,

գ/ հեքիաթներում ի հայտ են զալիս նորամուծություններ/կապված լեզվի, կենցաղի փոփոխության հետ, անցումը հրաշապատումից իրավատումի/,

դ/ հեքիաթային որոշ սյուժեներ ներկայացվում են որպես իրապատում հուշեր և, ընդհակառակը՝ իրական հուշապատումները որպես հեքիաթներ:

#### Ժաննա Խուրշուղյան

ՄԱՐՏԱԿԵՐՏԻ ՇՐՋԱՆԻ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆԸ

/ ըստ 1972- 79թթ. գործուղման արդյունքների/

1. Մարտակերտը /պատմական ձրաբերդը, ծարի և վերին Խաշենի մի մասը/ տարածքը և հայաքնակ գյուղերի քանակով/56/ Լեռնային Ղարաբաղի ամենամեծ շրջանն է։ Այն ունի հարուստ պատմական անցյալ և հուշարձաններ / Գանձասար, Նորից Մանկաց վանք, Խոթավանք, Խաթրավանք, Մեսիս, Աստղաբերդ, Կաշաղակաբերդ և այլն/: Այստեղ են գտնվում մարզի ամենաշարժը լեռնազագաթները / Մոռվ, Չիրս/ և ամենամեծ գետը / Թարթառ/։

Բնակչության մեծ մասը տեղացի է, մի քանի գյուղեր վերաբնակեցված են Պարսկահայքից, Գանձակից և Ղարաբաղի մյուս շրջաններից։

րից գաղթած հայերով։ Կան նաև ոչ հայկական գյուղեր/աղբքեջանցիներ, մոլոկաններ, հույններ/։

Նշված երեսույթները շրջանի քանահյուսական ավանդների համար ունեն որոշակի նշանակություն։

2. Մարտակերտի քանահյուսությունը, համեմատած մարզի մյուս շրջանների հետ, թիշ է ուսումնասիրված / կան մի քանի նմուշներ երկու-երեք գյուղից/։

Դաշտային պարզերական հետազոտությամբ ընդգրկել եմ 17 գյուղ, ծայնագրել շուրջ տաս հազար մետր ժապավեն նյութ՝ քանահյուսական ըոլոր ժանրերից։ Նյութերի քանակական պատկերը մոտավորապես հետևյալն է. զվարճախոսություններ՝ 220 միավոր, հերիաթներ՝ 170, ավանդույթներ՝ 70, առակներ՝ 30, զրույցներ՝ 20, հուշապատումներ՝ 10, քանածեային ժանրեր՝ հազար, տարբեր ընույթի երգեր՝ 60, իաղիկներ՝ 200 և այլն։ Գրանցել եմ նաև պարեր, մեղեղիներ և որոշ ծիսակատարություններ։

3. Նյութերի գրանցումը կատարվել է նախօրոք ծրագրված գիտական նպատակադրումով։ Ուշադրության են առնվել հետևյալ խնդիրները։

ա/ Քանահյուսության կենցաղակարման առանձնահատկությունների կապը աշխատանքային պահերի, սեռա-տարիքային խմբերի և որոշ ծիսակատարությունների հետ։

բ/ Քանասացը և ժամանակը։

գ/ Ժանրը և զանասացը։

դ/ Ժանրը և զանասացների սեռա-տարիքային խմբերը։

ե/ Քանասացի մասնագիտությունը, կրթական մակարդակը և քանահյուսությունը։

զ/ Քանասաց-քանահակաք կապը։

է/ Քանահյուսության ժառանգումը զանասացի սերունդների կողմից / ծնող-զավակ-թոռ/ և այլն։

4. Ժանրային-քանակական տվյալները կարելի է համարել և որպես քանահակաքության ընթացքում եղած հնարակորությունների դրսերում։

Տվյալները վկայում են, որ արձակն ու քանածեային ժանրները մեծ տոկոս են կազմում։ Զափածոյի քանակը տվյալ ազգագրական շրջանի համար պետք է համարել զարգր ցուցանիշ։

5. Նյութերի մեծ մասը նորություն է։ Ուշադրության են արժանի հատկապես գութաներգ-հորովելները, կթվորի երգերը, սգերգերը,

առասպելաքան ավանդությունները, ժողովրդական սպառնալիքները, որոշ հեքիաթներ, առակներ, զվարմախոսություններ, ինչպես նաև տարբերակները:

Նախատեսված է շարունակել շրջանի ղաշտային գյուղերի քանակացումը ավանդությունների հետազոտումը, իսկ որոշ խնդիրների պարզաբանման համար նպատակահարմար է կատարել ստացիոնար գրառումներ:

### Արմենուհի Ստեփանյան

#### ՏՂՄՄՐԴՈՒ ՄՐՄԽՀԻՆԵՐԻ ԶՄՐԴԱՆԱԽԵՐԸ / Ըստ ՀՊԳԹ ազգագրական Ֆոնդերի Նյութերի/

1. Հայ ժողովրդական տարագի քաղկացուցիչ տարրն են կազմել արախչիները, որոնց զարդանախշերի քննությունը քացահայտում է դրանց տղերսը հավատալիքային պատկերացումների հետ: Այս առումով ուշագրավ են տղամարդկանց արախչիները, որոնք զարդանախշերի հարստությամբ ու քազմազանությամբ մի ուրույն խումբ են կազմում:

2. Արախչիները, ըստ զարդաճերի, մի կողմից դրսենորում են որևէ պատմա-ազգագրական շրջանի քնորոշ տեղական ուրույն գծեր, մյուս կողմից երևան են ըերում ընդհանրապես հայ ժողովրդի մտահայցողությանը, նրա մշակութային ավանդություններին քնորոշ ընդհանրություն:

3. Արախչիների զարդանախշերի գույներում գերակշռում են կարմիր, կանաչ ու կապույտի մուգ և քաց երանգները, որոնք ամենայն հավանականությամբ առնչվում են գույների վերաբերյալ ունեցած ժողովրդական պատկերացումների հետ:

4. Արախչիներն ասեղնագործված են երկրաչափական զարդանախշերով, ի տարբերություն տարագի մյուս քաղկացուցիչ մասերի, որոնք հարուստ են նաև քուսանախշով ու կենդանական նախշով:

5. Արախչիների զագաթային մասի նախշաճերի մեջ կայուն կերպով պահպանվում են որոշակի պատկերներ, որոնք առնչվում են տակավին նախնադարից եկող պատկերացումների հետ և գուգահեռներ ունեն հնագիտական նյութերում: Այդ նախշաճերն իրենց արտաքին տեսքով հարատելով մինչև մեր դարի առաջին քառորդը, ամենայն հավանականությամբ, արդեն շեն ընկալվել այն քովանդակային ու գաղափարական իմաստով, ինչ ունեցել են հնում:

ՎԻՇՎԱՍՎԱՐՏԻ ԴՐՍՆՎՈՐՈՒՄՆԵՐԸ  
,,ՍԱՍՆԱ ՃՌԵՐՈՒՄ,,

1. Վիշվամարտի միջոլոգիամբ հայ առասպելաբանության հնագույն և կայուն ըտղադրիչներից է, որի մասին նախնական գրավոր վկայությունները վերաբերում են V դ. ծայր առնող գրական սկզբնական հուշարձաններին, մյուս կողմից՝ այն կենդանի հարատեսում է ըանակոր ավանդության մեջ առ ի XX դ.։

2. Բնական է, որ այս վաղնջական և հարակա միջոլոգիամբ դրսեորումներ գտներ հայ վիշվամարտի ավանդության մեջ և, մանավանդ, ամենամեծ վեպում՝ „Սասնա ճռերում,,։

3. Վիշվամարտը „Սասնա ճռերում,, դրսեորվում է երկու եղանակով։

ա/ ուղղակի՝ առասպելանական նկարագրով, և զ/ անուղղակի՝ վիշվամարտի պատմական իտավագրումներով։

Առաջին եղանակով այդ միջոլոգիամբ հանդես է գալիս Սանասարի և եղբօր/ երկվորյակների/ հետ կապված վիշվամարտի դրվագներում, երկրորդ եղանակով՝ Դավթի և Մսրամելիքի մենամարտում։

4. Սանասարի վիշվամարտության դրվագներում մի կողմից երեսն են գալիս հինարևելյան / շումերական / էտանա-միջին աղերսվող առասպելանական ողջ համալիրի հետագա դրսեորումները, որ գտնում ենք հեթիաքների միջազգային սյուժեներում / ATb. 537/, մյուս կողմից՝ հին հնդկանական ամպրոպային առասպելներում / Պղնձե քաղաքից Սանասարի հարսնառության մոտիվները/։

5. Դավթի և Մսրամելիքի հակամարտության, մենամարտի, Մսրամելիքի սպանության դրվագներում՝ մարդեղինացած և խիստ պատմականացած հերոսների արարքների ընդերջում ընկած է հին հնդկանական վիշվամարտի առասպելանական սյուժեն, հորինվածքի ու կառուցվածքի ընորոշ հատկանիշներով։

6. Թե երկվորյակ եղբայրների / Սանասարի և եղբօր/, թե Դավթի և Մսրամելիքի վիշվամարտի սյուժեներում գործում են ոչ թե պատահական կամ եկամուտ առասպելանական մոտիվներ, այլ երեսն է գալիս առասպելանական մի հնագույն, զորեղ հիմք, միասնական համակարգ ու տրամադրանություն, որն արտահայտվում է հերոսների ջրային ծագման, ջրից զորանալու, ջրից ճի, զենք ու զրահ ծեղը ջերելու, ջրի ակուն-

Եին տուն ու քաղաք կառուցելու, ջրի մեջ սպանվելու, ինչպես նաև ջրային կամ ջրարգել վիշապների դեմ նրանց մաքառելու և հաղթելու առասպելաբանական իրակություններում:

### Հասմիկ Խորայել յան

ԵՐԿՈՐՅԱԿ ԱՍՏՎՃՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ , ,ԹՈՒԹՄԱՆՈՒԿ-  
ՆԵՐԻ,, ՓՈԽԱԴՆՉԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՄՐՑԻ ՇՈՒՐՃԸ

1. Հայաստանի մ.թ.ա. Ա - I հազ. պատկանող մի խումը ժայռապատկերների և Վրաստանից գտնված ըրոնզե մի քանի գոտիների կոմպոզիցիաների քննարկումը քերում է այն հետեւթյան, որ Հայկական լեռնաշխարհում ըրոնզի դարում լայն տարածում է ունեցել երկվորյակ աստվածների պաշտամունքը: Այն գոյատել է նաև Վանի թագավորության ժամանակաշրջանում և Ներքափանցել հայ հեթանոսական միջավայրը, մարմնավորվելով , , թուխ Մանուկ,, անվանվող երկվորյակ կտրրների կերպարում:

2. Երկպազգվող թուխմանուկները կրում են երկվորյակ աստվածներին քնորոշ քոլոր հատկանիշները:

Մանուկներին տրված , , թուխ,, ածականն ուղղակիորեն մատնանշում է նրանց կազզ ջրի, անձրևի երևույթի հետ: Այդ առումով նրանք գուգահեռ են , , Սասնա ծոերի,, երկվորյակ դյուցազուներ Սանասար-Բաղդասարին: Թուխ Մանուկին ևս վերագրվում են ջուր սաեղծելու կարողություններ: Հնդկական երկվորյակ աստվածներ Աշվիների նման նրանք էլ հանդես են գալիս իջրե առատություն ստեղծող, չըերկանանց զավակ պարզեցող գերընական էակներ:

3. Թուխմանուկներին նվիրված միջնադարյան երգերում դիտվում է նաև նրանց եղանակ կարգավորելու կարողությունը և այդ առումով՝ թուխ Մանուկի վիշապասպան էությունը, ինչպես Սանասար-Բաղդասարինը:

4. Մինչև մեր օրերը հարատեած շատ հուշարձաններին/իաշքարեր, մատուռներ և այլն/ տրված,, թուխ Մանուկ,, անունը, հավանաբար, ծագել է ի սկզբանե, երկվորյակ թուխմանուկներին վերագրվող գերեզմաններից, որոնք, իջրե կանոն, սարքվում էին ջրերի մոտ: Պետք է ենթադրել, որ դա արվում էր /ինչպես ցույց են տալիս ուսումնասիրողները / ոչ միայն այդ գերեզմանները մշտապես խոնավ պահելու համար՝ անձրև ստանալու միտումով, այլև այն պատճառով, որ, ըստ հների պատկերացումների, երկվորյակների ոչ միայն ծնունդն էր կապված ջրի

հետ, այլև՝ մահը։ Այս գաղափարի խիստ ազոտ, գուցե և աղավաղված արձագանքները պահպանվել են նաև թուխմանուկներին նվիրած միջնադարյան երգերում։

5. Ժամանակի ընթացքում, հատկապես քրիստոնեության ազդեցության տակ թուխմանուկների, իջրե երկվորյակ աստվածների, պաշտամունքը վերանում է, մոռացության տրվում, իսկ նրանց անունը պահպանվում է ժողովրդի մեջ և հարատեսում մինչև մեր օրերը հասած խաչքարերի, մատուռների, աղբյուրների վրա, իջրե լոկ սրբի անուն, որոնց և վերագրվել են „, երկվորյակ աստվածների,, ֆունկցիաները։

6. Թուխմանուկներին նվիրված միջնադարյան երգերում պահպանված կցկուր տվյալների, „, Սասնա ծոերի,, երկվորյակ դյուցազունների և այլ երկրների երկվորյակ աստվածներին վերաբերող գուգահեռ նյութերի համեմատության և առհասարակ, երկվորգակ աստվածների պաշտամունքին վերաբերող ուսումնասիրությունների հիման վրա, հնարավորության սահմաններում վերականգնվում է թուխմանուկների կերպարը իջրե երկվորյակ աստվածներ։

### Վերժինե Սվագլ յան

ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ ԱՄԵՐԻԿԱՀՅԱՅԵՐԻ ՍՈՎՈՐՈՒԹՅԱՆ ԿՑԱՆՔԻՑ  
/ըստ ԱՄՆ-ում 1979թ. ուղևորության նյութերի/

1. Տակավին XVI դարից հայերը պանդխտել են Ամերիկա։ XX դարասկզբի մեծ եղեռնից հետո արևմտահայության հոծ զանգվածներ տարծեր երկրներից գաղթել ու քաջացրել են այդ մայրցամաքի, այդ թվում՝ նաև ԱՄՆ-ի հայ համայնքները։

2. Հասարակական նոր հարաբերություններն ստիպել են գաղթականներին հարմարվել ու ընտելանալ տեղի պայմաններին։

3. Ամերիկահայերը ժամանակի ընթացքում, եռանդուն ջանքերի գնով հասել են նյութական շատ թե քիչ քարեկեցիկ վիճակի, միաժամանակ ստեղծելով ազգային մշակութային որոշ օջախներ՝ եկեղեցիներ, դպրոցներ, ակումբներ, հայրենակցական միություններ, ուղղիոհաղորդումներ, թերթեր ու ամսագրեր /Կիսանգլերեն/, դրանով փորձելով հնարավորին շափ խուսափել ուժացումից։

Հայապահպանման գործին մեծապես նպաստում են նաև Հայրենիք-Սփյուռք կապերի ամրապնդումը և Սովետական Հայաստանից ստացվող նորանոր մշակութային ազդակները։

5. Տարբեր երկրներից գաղթած ամերիկահայերից գրի առնված ազգա-

գրական ու ըանահյուսական նմուշների հիման վրա կարելի է որոշ պատկերացում կազմել մասնավորապես ԱՄՆ-ում ապրող հայերի ներքին կյանքի ու սովորույթների վերաբերյալ :

ա/ Ամերիկահայերի / իմա՞ ԱՄՆ/ խոսակցական լեզուն եռաստիման է. համընդհանուր, տիրապետող լեզուն անգլերենն է, սակայն կենցաղավարում է նաև այն երկրի լեզուն, որտեղից գաղթել են, տարեցներն օտար շեշտադրությամբ ու աղավաղումներով դեռևս խոսում են նաև հայերենի իրենց ընիկ ծննդավայրի ըարքառով:

բ/ Ապրելով արքեր ժողովուրդների հարևանությամբ, նրանք որդեգրել են գանազան կենցաղային նոր քարքեր ու արարողություններ, ինչպես նորածնին ու հարսնացուին անակնկալ Showet party ևնծրե-հակաքույթ/կազմակերպելը, թաղման արարողության նոր, զուսպ ձեին անցնելը, Thanks giving day /շնորհակալության օր/ որպես տոն նշելը, ինչպես նաև հյուրասիրության, վարկեցողության ու ապրելակերպի ուրիշ պահերի հետ կապված օտարամուտ այլ սովորույթներ:

Արտաքուստ դրսենորկելով այլասեռ /ամերիկյան/ ձեերով, խորցում դրանք պահպանում են հայկականը, անդրադարձնում հնամենի ավանդութային ծեսերի վերհուշներ / ծննդկանի քարծին գնալը, աղջիկանը, նշանդրեցը, հարսի գլուխլվանեցը, հարսնառի ,, կանչը,, , հարսի երեսքացեցը, հարսի արնեգինը հատուցելը և այլն/:

6. Լեզվա-մշակութային խայտարդետության այս քարդ պայմաններում ամերիկյան ապրելակերպն ավելի հեշտ, գրեթե առանց դիմադրության է ներթափանցում տեղի հայերի կյանքի ու կենցաղի մեջ, վերափոխելով նրանց ըստ իր պատկերի:

Սրուսյակ Սահակյան

ՀԱՎԱՏՄՐՄՈՒԹՅԱՆ ԲԱՐՈՅԱԿԱՆ ԸՄԲՈԽՈՒՄԸ

ՀԱՅ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ

1. Որպես ուսումնասիրության նյութ վերցված է վիպական մեկ պատում. թագավորը՝ կնոջ անհավարմության մեկ փաստով միայն, հանգում է ընդհանրապես կանացի սեռի քացասման և հրամայում կոտորել իր տերության քոլոր կանաց. տարեց վեզիրը թագավորին ապացուցում է նրա հրամանի անխոհեմությունը՝ պատմելով կնոջ հավատարմության ավելի զորավոր մի նկարագիր: Թաստորեն, մեկ պատումի մեջ գործում է իրար հակասող, քայլ մեկ հիմնական նպատակի ծառայող երկու սյուժե:

2. Խնդիրը քարձրացված է միայն մեկ պատումի և դրա հիմքում ընկած հավատարիմ ու անհավատարիմ կնոջ վիպական մոտիվի վրա, որովհետև.

ա/ Խիստ սիրված և տարածված, հանրահայտ ըանահյուսական մոտիվ է ըոլոր ազգերի մեջ, և առանց միջազգային գուգահեռների անցկացման, կարելի է հայկական նյութը վեր հանել հենց նման մի գուգահեռի կամ համեմատական ուսումնասիրության համար:

բ/ Այս մոտիվն ինչպես ամենուր, այնպես էլ մեզանում ունի համեմատար շատ տարբերակներ: Հայտնի է, որ ինչքան շատ են տարբերակները, այնքան մոտ է ծշմարտության ըացարձակ արժեքը:

գ/ Մոտիվի տարբերակները տալիս են տարածման ու տեղայնացման հարուստ պատկեր. ասել է, թե՝ մոտիվը տեղային ընույթ չի կրում, սիրված է ազգագրական-քանահյուսական ըոլոր գոտիներում, և սյուժետային տարբեր հարասումներում արտահայտված նույն ըարոյախոսությունը, ըարոյական նորմերն ու ժողովրդական իմաստությունը համազգային ընույթ ունեն:

դ/ Տարբերակներ տալիս է մեծ մասամբ առաջին սյուժեն, այսինքն՝ անհավատարմության մոտիվը զարգանում է տարբեր եղանակներով: Հավատարմության մոտիվի զարգացումն առավել կայուն ընթացքի ու ճեի մեջ է: Սա ուշադրության արժանի է այնու, որ այստեղ նույնպես արտացոլվում է ժողովրդի ընկալումը սխալի և ծշմարտի, ոչ կատարյալի մասին. անհավատարմությունը՝ ոչ կատարյալը, օրգում կերպարանքներ ունի, հավատարմությունը՝ կատարյալը՝ մեկ:

3. Ընտրված սյուժեն հնարավորություն է տալիս ըացահայտելու ըարոյական ըմբռման էթնիկ ընորոշ նկարագիրը: Մոտիվի դրսելորումները յուրաքանչյուր ժողովրդի մեջ պայմանավորված են կնոջ սոցիալական դերի, հասարակական դիրքի և դրա վրա կառուցված նրա նկարագրի ժողովրդական պատկերացումներով:

4. Կնոջ նկարագրի ընկալումը հայ ըանահյուսության մեջ սկիզբ է առնում հեթանոսական աստվածուհիների հայոց դիցարանից. այսինքն՝ ժողովուրդը յուրաքանչյուր կնոջ մեջ տեսնում է մորը, իսկ մոր մեջ՝ մայր աստվածությունը: Այս իմաստով հայ ժողովուրդը հիմնականում հավատարիմ է մնացել իր դիցարանական սկզբին. Նրա պատկերացումներում կինը սիրո և հավատարմության կատարյալ կերպար է, օջախի սյուն, սրըություն:

5. Քննարկվող պատումն իր ժանրային կառուցվածքով խիստ մոտ է կանգնած նովելի ժանրին, այլ ոչ հեթանոր, ինչպես մինչև այժմ ընդունված է մեզանում: Հավատարիմ և անհավատարիմ կնոջ վիպական

մոտիվն իր տարօնքակային քոլոր դրսեռումներով լավագույնս անդրադարձնում է ժանրային այն առանձնահատկությունները, որոնք մեզ իրավունք են վերապահում այդ և նման ստեղծագործությունները որոշակելու որպես առանձին ժանր։ Իսկ արտաքին, մեծ մասամբ հեթիաթային հնարանքների քացանայտումը հնարավորություն է տալիս ի ցույց դնելու այն պատճառները, որոնք շփոթ նմանության դուր են քացում հեթիաթի ժանրի հետ։

Ռախա Խաչատրյան  
ՊԱՇՏԱՄՈՒԽԵՍՑԻՆ ՏՄՐՐԵՐԸ ՍՍՍՌԻՆԻ ԵՎ ՏՄՐՈՒԻ  
ՊՄՐԵՐԳԵՐԻ ԿՐԿՆԱԿԱՆՆՐՈՒԻՄ

1. Կապված լինելով ծիսային արարողությունների հետ, պարերգերն ունեցել են կիրառական-նպատակային նշանակություն՝ ծառայել ին որոշակի ծիսա-հմայական արարողությունների, համադրելով խոսքը երաժշտության ու շարժմանը։ Դրանցում խորապես արտահայտված են նախնական աշխարհայեցությունն իր տարերայնությամբ, մարդու ընապաշտական պատկերացումները, նախնական հավատալիքներն ու սովորույթները։ Հետզհետե կորցնելով ծիսային քովանդակությունը, պարերգերը ներառել ու պահպանել են համեմատաքար նեղ, կենցաղային տարերը՝ ստանալով առավելապես սիրային և կենցաղային քնույթ, որպիսի տեսքով էլ հասել են մեզ։ Նոր երեսույթներն ու հարազերություններն ավելի արագ են արտացոլվում պարերգերում և դա գոլիս է նրանց իմպրովիզացիոն քնույթից։

2. Ամենակայունն ու վաղնջականը պարերգերի կրկնակներն են։ Աղերսվելով նախնական ծեսերի և տոների հետ, կրկնակները անընդհականվելով, կատարել են խոսքի հմայական ներգործման ֆունկցիա, հիմքում ունենալով գերքնական ակնկալվող զորության հավատալիք և պաշտամունքային տարրեր։ Թալինում վերաբնակեցված սասունցիներից ու մշեցիներից գրառված պարերգերը իրենց տարբերակներով այժմ էլ աշքի են ընկնում ավանդական կայուն գծերով և գեղարվեստական առավել հղկվածությամբ։

3. „Նար, նար, նարգյուլում,, , , նարոյ, նարոյ, նարոյ ջան,, , նարե, նարե,, կրկնակները կապված են ջրի պաշտամունքի հետ և անդրադարձնում են նար-ի և ապա՝ ծովինար-ի, որպես ջրային ոգու, պաշտամունքը հայերի մեջ։ Բազմաթիվ ավանդությունների, հավատալիքների, պաշտամունքային վայրերի առկայությունը Սա-

սունում և Տարոնում, հավաստում են ջրի պաշտամունքի հետքերը, ընապաշտական ու անիմիստական վերապրուկները՝ ավանդապահ այդ հատվածի մեջ:

4. „Նաներ, նաներ,, , , / Հա նաներ, նաներ,, , , Հոյ նաներ, նաներ, էղ էլ ըըխտի պան էր,, կրկնակները նանեի պաշտամունքի արձագանքներն են: Նանեն որպես աստվածամայր, ,, Մեծ մայր,, հանդես է զալիս ,, Սասնա ծռեր,, էպոսում՝ ի ղեմս Դավթի հովանավոր, խրատատու նանեի, իսկ վերջինս որպես այդպիսին / մեծ մայր/ տակավին այժմ կենցաղավարում է սասունցիների և մշեցիների մեջ:

5. Դերկո-Նինա հնագույն ճոներգը նվիրված է եղել Դերկետո /ասորական/ և Նինա /շումերական/ աստվածուհիներին, որոնք լինելով նույն ֆունկցիայի կրողներ / սիրո և պտղաբերության/, ընկալվել են որպես մի աստվածություն և հանդես են եկել միասին, մի քաղադրյալ անվամբ: Ասորական Դերկետոն պաշտվել է ողջ Հին Արևելքում, ըստ որում, նաև Հայաստանում, սկզբում՝ Աստղիկ և ապա՝ Անահիտ անուններով, որը հավաստում է Աստղիկի քազմաթիվ պաշտամունքային վայրերի առկայությամբ և պաշտամունքի արձագանքներով Տարոնի պարերգերում:

6. Հայաստանի հարավի՝ Սասնո և Տարոնի պարերգերի կրկնակները, որպես պաշտամունքային, ծիսային արարողությունների վերապրուկներ, սեմական աշխարհի հնագույն մշակութային ընդհանրության հեռավոր արձագանքներ են, գերզնական հավատալիքներով նախաղարպած մարդու վաղնջական ըմբռնումներ:


## Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Խ

<b>ԴԵՐԵՆ ՎԱՐԴՈՒՄՅԱՆ ՄՐՏԱՇԵՍ ԽԱՁԻՆՅԱՆ</b>	- Հայ ազգագրությունն ու քանահյուսությունը 60 տարում . . . . .	3
<b>ԴԵՐԵՆ ՎԱՐԴՈՒՄՅԱՆ</b>	- Հայկական քարծրավանդակի ընակչության նյութական մշակույթի համակարգակառուցվածքային և պատմա-համեմատական վերլուծությունը . . . . .	5
<b>ԶԱՎԵՆ ԽԱՌԱՏՅԵԱՆ</b>	- Դիպվածային /օկազիոնալ/ ծիսական համալիրը հայերի կենցաղում . . . . .	6
<b>ՍՈՒՐԵՆ ՀՈՔՈՍՅԱՆ</b>	- Զիթատու ըույսերի և ժիթամթերքների օգտագործման ժողովրդական եղանակները հայոց մեջ . . . . .	8
<b>ԼԵՎՈՆ ՄԹՐԱՎՄՅԱՆ</b>	- Տեսնելու ու շտեսնելու հակադրությունը առասպելում և ծեսում . . . . .	9
<b>ԱՐՄ ԳՈՒԼՅԵԱՆ</b>	- Պրոքսեմիկ տարածքը որպես էթնո-նշանային համակարգ . . . . .	11
<b>ՆՎԱՐԴ ԵՐՆԺԱԿՅԱՆ</b>	- Նրկնային լուսատուների շարժման և ժամանակի քարենպաստ-անըարենպաստ ընկալումը հայերի մեջ . . . . .	12
<b>ՎԱՀՐՄՄ ԹԱԹԻԿՅԱՆ</b>	- Արցախի հատուկ խորհրդիմաստ արտահայտող ուղեգորգերը . . . . .	13
<b>ԷԴՄՈՆԴ ՍԻՄՈՆՅԱՆ</b>	- Տղամարդկանց և կանանց տարբերություններն ըստ Թագինգ-տեստի/խակասական սաղայ ցեղախմբի օրինակով/ . . . . .	14
<b>ԱՆՆԱ ՓԱԼԻԿՅԱՆ</b>	- Մարդարանական որոշ ուսումնասիրություններ Հայաստանի հին և արդի ընակ-	

	չության հետնորդության պրոքլեմի վերա-	
	քերյալ . . . . .	17
ՌԱՖԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ	- ճանապարհաշափերն Սնդրկովկասում XIX դարում . . . . .	19
ՔՄԱՐԻԿ ԽԱՆՄՂՅԱՆ	- Բնակելի տան համալիրի հետ կապված ժողո- վրդական պատկերացումները . . . . .	20
ԻՐԻՒՄ ԴՈԼՃԵՆԿՈ	- Հայաստանի ռուս մոլոկանների հարսանե- կան արարողությունները/XIX դ.-XX դ սկիզբ/ . . . . .	21
ՄԱՄՈՆ ԽԱԼՃՅ /ԴՄՐ- ՎԵՆՅԱՆ /	- Քրդերի անասնապահական որոշ տերմիննե- րի ստուգաքանության փորձ . . . . .	23
ԷՄՄԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ	- Ույզպրների թատերականացված ներկայա- ցումները . . . . .	25
ԺԵՆՅԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ	- Թոշնային կերպարները չուկոտա-էսկի- մոսյան պարերում . . . . .	26
ԷՄՄԱ ԿԱՐՄԻՆՅԱՆ	- Նրեանի ընտանիքի կազմի յուրահատկու- թյունները /ըստ Նրեան քաղաքի ընակ- չության էթնոսոցիոլոգիական հետազոտու- թյան նյութերի/ . . . . .	28
ԿԱՐԼԵՆ ՍԵՂԲՈՍՅԱՆ	- Ավանդութայինի արտահայտության մի քանի յուրահատկություններ արդի քաղաքի և արդյունաբերական ավանի ընակչության մշակույթի մեջ / ըստ Հայկական ՍՍՀ ազգագրական նյութերի / . . . . .	29
ԼԻԼՅԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ	- Ավանդութայինի հարցը հայերի հարսանե- կան արարողություններում/ ըստ Նրեան քաղաքի ընակչության էթնոսո-	

	ցիոլոգիական հետազոտության նյութերի / . . . . .	31
ՌՈՒԲԵՆ ԿԱՐՄԱՉՅԱՆ	- Աղապատցիոն պրոցեսները և ներպարփակ խմբերը / ըստ Նրեան քաղաքի ընտակչության էթնոսոցիոլոգիական հետազոտության նյութերի / . . .	32
ՌՈՒԲԵՆ ՕՀԱԽԱՆՅԱՆ	- Ազգային հարաբերությունների էթնոսոցիոլոգիական ուսումնասիրման մի քանի հարց / ըստ Նրեան քաղաքի ընտակչության էթնոսոցիոլոգիական հետազոտման արդյունքների / ..	33
ՀՐԱՄՈՒՏ ՍՈՒԲԵԼՅԱՆ	- Զերքեզահայերի էթնիկ ինքնագիտակցության հարցի շուրջը . . . . .	35
ԱՐՏԱՇԵՍ ՆԱԶԻՆՅԱՆ	- Հայկական կումուլյատիվ ժողովրդական հեքիաթը / ըստ հին ու նոր գրառումների / . . . . .	37
ՌՈՒԶԱՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ	- Իրանական ժողովրդական վեպի արձագանքները Գեղարքունիքի քանակոր արձակում . . . . .	38
ԹԱՄԱՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ	- Լոռու գառմա-ազգագրական շրջանի քանահյուսությունն արդի փուլում / ըստ հեղինակի գրառումների / . .	39
ԷՄԻԵՐ ԽԵՄՉՅԱՆ	- Շամշադինի շրջանի քանահյուսական նյութերը / ըստ հեղինակի գրառումների / . . . . .	40
ԺԱՆՆԱ ԽՈՒՐՃՈՒԴՅԱՆ	- Մարտակերտի շրջանի քանահյուսությունը / ըստ 1972-79 թթ. գործուղման արդյունքների / . . .	41


ԱՐՄԵՆՈՒՀԻ ՍՏԵՓԱՆՅԱՆ	- Տղամարդու արախչիների գարղանախ- շերը /ըստ ՀՊՊ ազգագրական Ֆոն- դերի նյութերի / . . . . .	43
ՍՄՐԳԻՍ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ	- Վիշապամարտի դրսեորումները , , Սասնա ծոերում,, . . . . .	44
ՀԱՍՄԻԿ ԻԽՐԱՅԵԼՅԱՆ	- Երկվորյակ աստվածությունների և , , թուխմանուկների,, փոխառնչակցու- թյան հարցի շուրջը . . . . .	45
ՎԵՐԺԻՆ ՍՎԱԶԼՅԱՆ	- Դիտարկումներ ամերիկահայերի սովորութային կյանքից /ըստ ԱՄՆ- ում 1979թ. ուղևորության նյութե- րի/ . . . . .	46
ՄՐՈՒՍՅԱ ՍՍՀՄԿՅԱՆ	- Հավատարմության ըարոյական ըմբռու- մը հայ քանահյուսության մեջ . . .	47
ՌԱԻՍԱ ԽՍՀՄՏՐՅԱՆ	- Պաշտամունքային տարրերը Սասունի և Տարոնի պարերգերի կրկնակներում.	49



ԿՃ 06036 Դասվեր 462 Տպաքանակ 30  
Հանձնված է արտադրության 30.04. 1980 թ., ստորագրված  
է տպագրության 29.04.1980 թ., տպագր. 3, 5 մամուլ,  
պայմ. 3,0 մամուլ, հրատ. 3,5 մամուլ, թուղթ. 1,  
 $60 \times 84^1/16$ :

Անվնար:

-----  
Հայկական ՍՍՀ ԳԱ Էջմիածնի Թպարան






[154.]

A ii  
63436

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



220063436